ԱՆԻ ՎԵՐԱ - ԱՆԻ 2011

Հրատարակությունը նվիրվում է
Անին Հայաստանի մայրաքաղաք հռչակելու 1050 ամյակին
Թվին հայոց ՆԺ (961) - ՌՆԿ (2011)

Dedicated to the 1050th anniversary
of proclaiming Ani capital of Armenia
410 (961) - 1460 (2011) of the Armenian Era

Издание посвящается 1050-летию
провозглашения Ани столицей Армении
410 (961) -1460 (2011) годы армянского летоисчисления

ՀՏԴ 941(479.25):72(479.25)
ԳՄԴ 63.3.(2Հ)+85.11(2Հ)
Կ294

Նախագծի ղեկավարումը
ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Project Initiator
MINISTRY OF DIASPORA OF THE REPUBLIC OF ARMENIA

Проект осуществлен по заказу
МИНИСТЕРСТВА ДИАСПОРЫ РА

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION
ФОНД ПО ИЗУЧЕНИЮ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ
www.armenianarchitecture.us www.raa-am.com info@raa.am raayer@sci.am

Կարապետյան Սամվել
Կ294 Անի ՌՇ / Ս. Կարապետյան; ՀԵՈՒ հիմնադրամ.- Եր.: Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2011, 264 էջ:

ՀՏԴ 941(479.25):72(479.25)
ԳՄԴ 63.3.(2Հ)+85.11(2Հ)

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION
ФОНД ПО ИЗУЧЕНИЮ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ

ISBN 978-99941-875-9-1



ԱՆԻ ՌՈՇ

ANI 1050

АНИ

Տպագրվել է
ՀՀ սփյուռքի
նախարարության
հովանավորությամբ

Նախահրատարակչական
աշխատանքներն
իրականացվել են
ՀՀ մշակույթի
նախարարության
աջակցությամբ

Published through the
patronage of
the Ministry of Diaspora
of the Republic of
Armenia

Pre-publication work
has been carried out
with the support of the
Ministry of Culture
of the Republic of
Armenia

Напечатано
при финансовой
поддержке
Министерства
диаспоры РА

Предварительные
работы осуществлены
при содействии
Министерства
культуры РА

Բովանդակություն

Պատմական համառոտ ակնարկ 6
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 12
Միջնաբերդ 13
Աշոտյան պարիսպներ 20
Աղջկաբերդ.....21
Սմբատյան պարիսպներ 22
Ավագ դուռ 26
Կարուց դուռ 28
Նոր Դվնո դուռ.....30
Գայլաձորի դուռ 32
Առյուծի դուռ.....33
Իգաձորի դուռ 34
Պարիսպների արևելյան հատվածը 35
Մխիթարիչի աշտարակ, Զ 37
Սարգսի աշտարակ, Ժ 38
Աշտարակ, ԺԸ.....39
Սպասալարյան աշտարակ, ԼԴ.....40
Շանուշի աշտարակ, ԽԶ.....41
Աշտարակ, Ծ 42
ԱՐՔՈՒՆԻ ԵՎ ԻՇԽԱՆԱԿԱՆ
ԱՊԱՐԱՆՔՆԵՐ 43
Բագրատունյաց արքունի ապարանք 44
Պահլավունյաց իշխանական ապարանք.....45
Սարգսի իշխանական ապարանք 52
ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐ 53
ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐ 60
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ 63
Միջնաբերդի արքունի եկեղեցի 65
Միջնաբերդի քառախորան եկեղեցի 73
Աբուղամրենց Սբ. Գրիգոր եկեղեցի 76
Մայր տաճար 83
Վեցխորան (Բազմախորան) եկեղեցի 94
Միջնաբերդի գմբեթավոր եկեղեցի 104
Սբ. Առաքելոց եկեղեցի 111
Գագկաշեն Սբ. Գրիգոր եկեղեցի 122
Սբ. Փրկիչ եկեղեցի 129
Հովվի եկեղեցի 140
Աղջկաբերդի վանական եկեղեցի 146
Շուշան Պահլավունու եկեղեցի.....153
«Յուրահատուկ» եկեղեցի.....155
Սբ. Հռիփսիմե եկեղեցի.....161
Եկեղեցի, ԽԷ.....162
Եկեղեցի, Ժ.....165
Քարիմադինի եկեղեցի, ՃԱ.....168
Եկեղեցի, Ծ 171
Խաչուտի (Բախտաղեկի) եկեղեցի.....173
Տիգրան Հոնենցի Սբ. Գրիգոր եկեղեցի 177
Կատրամիդե թագուհու դամբարան.....194
Բեխենց (Կուսանաց) վանք 197
«Վրացական» եկեղեցի.....208
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԱՅԼ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐ 212
Մանուչեի մզկիթ.....213
Աբուլ Մամրանի մզկիթ.....215
ԿՈԹՈՂՆԵՐ ԵՎ ԽԱՉՔԱՐԵՐ 216
ՎԻՄԱՓՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ.....224
Ախուրյանի ձոր.....225
Բագնայրի ձոր 226
Գայլաձոր.....227
Իգաձոր.....228
Վիմափոր եկեղեցի 230
Ծաղկոցաձոր «D».....231
Ծաղկոցաձոր «K, J» 232
Ծաղկոցաձոր «N».....233
Ծաղկոցաձոր «O».....234
Ստորգետնյա Անի 235
Տիգրան Հոնենցի դամբարան.....236
ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐ.....239
«ՀՆԱԴԱՐԱՆ ԱՆԻՈՅ».....241
Լուսանկարների ցանկ 244

Contents

A Brief Historical Introduction 8
DEFENSIVE INSTALLATIONS 12
The Citadel 13
Ashot's Ramparts 20
Aghjkaberd (Girl's Castle) 21
Smbat's Ramparts 22
Avag (Principal) Gate 26
Karoots (Kars) Gate.....28
Nor Dvno (New Dvin) Gate 30
Gate of Gayladzor 32
Aryootz's Gate 33
Gate of Igadzor.....34
Eastern Section of the City Walls 35
Tower of Mkhitarich, № 6 37
Tower of Sargis, № 10 38
Tower, № 18.....39
Spasalar's Tower, № 34 40
Tower of Shanoosh, № 46 41
Tower, № 50.....42
ROYAL AND PRINCELY RESIDENCES 43
The Bagratids' Royal Residence 44
The Pahlavunies' Princely Residence 45
Sargis's Princely Mansion 52
RESIDENTIAL AND PUBLIC BUILDINGS.....53
ENGINEERING AND PRODUCTION WORKS ..60
BUILDINGS OF WORSHIP 63
Royal Church of the Citadel 65
Four-Apse Church of the Citadel 73
Abughamrents St. Grigor Church.....76
Cathedral.....83
Six-Apse (Multi-Apse) Church 94
Domed Church of the Citadel 104
Sourb Arakelots (Holy Apostles') Church 111
Gagkashen St. Grigor Church 122
Sourb Prkich (Holy Saviour) Church 129
Hovvi (Shepherd's) Church 140
Monastic Church of Aghjkaberd 146
Church of Shushan Pahlavuny 153
"Unique" Church 155
St. Hripsime Church 161
Church, № 47.....162
Church, № 10 165
Church of Karimadin, № 101 168
Church, № 50.....171
Church of Khachut (Bakhtaghek) 173
St. Grigor Church of Tigran Honents.....177
Queen Katramide's Sepulchre 194
Bekhents (Koosanats) Convent 197
"Georgian" Church.....208
OTHER BUILDINGS OF WORSHIP.....212
Mosque of Manuche 213
Mosque of Abul Mamran 215
STELES AND CROSS-STONES 216
CUT-IN-ROCK STRUCTURES.....224
The Akhurian Gorge 225
The Bagnayr Gorge 226
Gayladzor.....227
Igadzor.....228
Cut-in-Rock Church 230
Tzaghkotsadzor "D" 231
Tzaghkotsadzor "K, J" 232
Tzaghkotsadzor "N" 233
Tzaghkotsadzor "O" 234
Underground Ani 235
Tigran Honents' Sepulchre 236
COATS OF ARMS 239
REPOSITORY OF ANI.....241
LIST OF PHOTOGRAPHS 244

Содержание

Краткий исторический очерк 8
ОБОРОНИТЕЛЬНАЯ СИСТЕМА 12
Цитадель (Вышгород) 13
Ашотовы стены 20
Ахчкаберд (Девичья крепость) 21
Смбатовы стены 22
Главные (Аваг) ворота 26
Карсские (Каруц) ворота 28
Новые Двинские (Нор Двно) ворота.....30
Гайладзорские ворота 32
Ворота Арюца 33
Игадзорские ворота 34
Восточная часть крепостных стен 35
Башня Мхитарича, № 6 37
Башня Саркиса, № 10 38
Башня, № 18 39
Башня Спасалара, № 34 40
Башня Шануша 41
Башня, № 50 42
ЦАРСКИЕ И КНЯЖЕСКИЕ ДВОРЦЫ ...43
Царский дворец Багратидов 44
Княжеский дворец Пахлавуни 45
Княжеский дворец Саркиса 52
ЖИЛЫЕ И ОБЩЕСТВЕННЫЕ
СООРУЖЕНИЯ 53
ИНЖЕНЕРНЫЕ И
ПРОИЗВОДСТВЕННЫЕ СООРУЖЕНИЯ ..60
КУЛЬТОВЫЕ СООРУЖЕНИЯ 63
Дворцовая церковь Цитадели 65
Четырехапсидная церковь Цитадели 73
Церковь Абугамренц Сурб Григор
(Св. Григория) 76
Кафедральный собор 83
Шестиапсидная (Многоапсидная)
церковь 94
Купольная церковь Цитадели 104
Церковь Сурб Аракелоц (Св. Апостолов) 111
Церковь Гагикашен Сурб Григор
(Св. Григория) 122
Церковь Сурб Пркич (Св. Спасителя) 129
Церковь hОвива (Пастушья церковь) 140
Церковь монастыря Ахчкаберда 146
Церковь Шушан Пахлавуни 153
"Уникальная" церковь 155
Церковь Сурб Рипсимэ (Св. Рипсимэ) 161
Церковь, № 47 162
Церковь, № 10 165
Церковь Каримадина, № 101 168
Церковь, № 50 171
Церковь Хачута (Бахтагеки) 173
Церковь Сурб Григор (Св.Григория)
Тиграна Оненца 177
Гробница царицы Катрамидэ 194
Монастырь Бехенц (Кусанац) 197
"Грузинская" церковь 208
ДРУГИЕ КУЛЬТОВЫЕ СООРУЖЕНИЯ ..212
Мечеть Манучэ 213
Мечеть Абул Мамрана 215
СТЕЛЫ И ХАЧКАРЫ 216
СКАЛЬНЫЕ СООРУЖЕНИЯ АНИ 224
Ущелье реки Ахурян 225
Ущелье Багнайра 226
Ущелье Гайладзор 227
Ущелье Игадзор 228
Скальная церковь 230
Цахкоцадзор "D" 231
Цахкоцадзор "K, J" 232
Цахкоцадзор "N" 233
Цахкоцадзор "O" 234
Подземный Ани 235
Гробница Тиграна Оненца 236
ГЕРБЫ 239
АНИЙСКИЙ МУЗЕЙ ДРЕВНОСТЕЙ 241
СПИСОК ИЛЛЮСТРАЦИЙ 244

Պատմական համառոտ ակնարկ

Անի մայրաքաղաքի ավերակները գտնվում են Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գավառում (ներկայիս Թուրքիայի Կարսի նահանգ)՝ Գյումրի քաղաքից 30 կմ հարավ-արևմուտք՝ Ախուրյան գետի աջ ափին: Իգաձորով, Ծաղկոցաձորով և Գայլաձորով առանձնացած եռանկյունաձև հրվանդանի վրա տարածված քաղաքատեղին զբաղեցնում է շուրջ 150 հա մակերես և ունի ծովի մակերևույթից 1500 մ միջին բարձրություն:

Հնագույն ժամանակներից Անիի տեղում եղել է բնակավայր, իսկ մերձակայքում՝ մ.թ.ա. Ը-Է դարերի դամբարանադաշտ:

Հայ մատենագրության մեջ Անին՝ իբրև անմատույց ամրոց, առաջին անգամ հիշատակում են Ե դարի պատմիչներ Եղիշեն և Ղազար Փարպեցին: Վաղ միջնադարում Շիրակ և Արշարունիք գավառների հետ մեկտեղ Անին պատկանում էր հայ նախարարական հայտնի Կամսարական տոհմին:

Ը դարի 80-ական թվականներին Հայաստանի իշխան Աշոտ Բագրատունի Մսակերը Կամսարականներից գնում է Արշարունիք և Շիրակ գավառները (Անի ամրոցով) և միացնում իր տիրույթներին:

Թ դարի վերջերին Անին արդեն գյուղաքաղաք էր:

961 թ. Բագրատունիներն իրենց արքունիքը Կարսից փոխադրում են Անի և այն հռչակում մայրաքաղաք: 964 թ. Աշոտ Գ Ողորմած թագավորն ամրոցից հյուսիս՝ հրվանդանի նեղ մասում, կառուցում է հզոր պարիսպ, որն էլ հետագայում իր անունով կոչվում է Աշոտաշեն:

Գտնվելով Դվին-Տրապիզոն առևտրական կարևոր ճանապարհի վրա՝ Անին արագ թափով սկսում է զարգանալ: Քաղաքի արագ աճը Սմբատ Բ-ին (977-989) ստիպում է 989 թ. կառուցել երկրորդ՝ Սմբատաշեն պարիսպները, որոնք անցնում էին Ծաղկոցաձորի, Իգաձորի եզրերով, միանում Գայլաձորին, ապա շարունակվում Ախուրյանի կիրճի եզերքով և շրջափակում քաղաքի նորաշեն հատվածը:

Անին մեծ զարգացում է ապրում Գագիկ Ա-ի (989-1020) թագավորության խաղաղ տարիներին:

Հայաստանի մայրաքաղաք Անին առևտրական կապերի մեջ էր Բյուզանդիայի, Պարսկաստանի, արաբական երկրների, Հարավային Ռուսաստանի և Միջին Ասիայի հետ: Այս շրջանում Անիի կառուցապատումն իրականացվում է աննախադեպ բուռն ընթացքով: Քաղաքում մեկը մյուսի հետևից ծնունդ են առնում հասարակական և պաշտամունքային բազմաթիվ կառույցներ:

ԺԱ դարում Անին առևտրաարհեստավորական համքարություններ և շուրջ 100000 բնակիչ ունեցող մեծահռչակ քաղաք էր:

Գագիկ Ա-ի մահից հետո ծայր առած ներքին երկպառակությունները խարխլում են պետականության հիմքերը: Պայքարը գահի համար առանձնապես սրվում է Գագիկ Ա-ի որդիների՝ Հովհաննես-Սմբատ թագավորի և նրա եղբոր՝ Աշոտ Դ-ի միջև: Թուլակամ Հովհաննես-Սմբատը, երկյուղելով Տայքի ապստամբությունը ճնշած բյուզանդական բանակի ներխուժումից, 1023 թ. Անին իր մերձակայքով կտակում է Բյուզանդիային: Նրա և Աշոտ Դ-ի մահից հետո Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսը և Վեստ Սարգիս իշխանն իրենց համախոհներով աշխատում են ի կատար ածել Անիի հանձնման կտակը, սակայն հանդիպում են ազնվականների մի մասի և քաղաքի բնակչության դիմադրությանը: Պետականությունը պահպանելու նպատակով Վահրամ Պահլավունու առաջնորդությամբ 1042 թ. վերջին թագավոր է օծվում Աշոտ Դ-ի որդին՝ պատանի Գագիկ Բ-ն (1042-1045): 1043-1044 թվականներին բյուզանդական զորքերը մի քանի անգամ պաշարում են Անին՝ պահանջելով հանձնել քաղաքը: Զորահրամանատար Վահրամ Պահլավունու գլխավորությամբ կազմակերպվում է Անիի պաշտպանությունը, որն էլ մնում է անառիկ: Սակայն 1045 թ. Գագիկ Բ թագավո-

ին նենգաբար կանչում են Կոստանդնուպոլիս և գահազրկում:

Սրանով կայսերական Բյուզանդիան հասնում է իր նպատակին և, ըստ էության, կայացնում նաև իր մահվան դատավճիռը, քանի որ Անիի նվաճումով և հայկական պետականության ոչնչացումով փլուզվում է կայսրության արևելյան սահմանին գտնվող այն հզոր պատվարը, որը պետք էր և կարող էր դիմակայել սելջուկյան արշավանքներին:

1064 թ. Հայաստան կատարած երրորդ արշավանքի ժամանակ Անին գրավում են սելջուկները:

1072 թ. Դվինի ամիրա Աբուլսուարը սելջուկ զորավար Ալփ-Ասլանից գնում է Անին և տալիս իր որդի Մանուչեին: Դրանով հիմք է դրվում Անիի Շեդդադյան իշխանությանը, որն ընդմիջումներով գոյատևում է մինչև 1199 թ.:

ԺԲ դարում Անին մի քանի անգամ գրավում են հայ-վրացական միացյալ զորքերը:

1199 թ. Անին ազատագրվում և անցնում է Զաքարյաններին, սակայն 1236 թ. քաղաքը պաշարում և դավադրաբար գրավում են մոնղոլները: Անեցիների՝ 1249 և 1260 թվականների ապստամբությունները հաջողություն չեն ունենում:

Մինչև ԺԴ դ. կեսերը, նույնիսկ 1319 թ. կործանարար երկրաշարժից հետո Անին՝ որպես քաղաք, դեռ պահպանում է իր գոյությունը: Սակայն դարավերջին Լենկ-Թեմուրի արշավանքն ու իրարահաջորդ օտար տիրակալների հաստատած բիրտ քաղաքականությունն առաջ են բերում բնակչության հոծ խմբերի արտագաղթ դեպի օտար երկրներ՝ Վրաստան, Հարավային Ռուսաստան, Ղրիմ:

ԺԶ դարում Անին արդեն մի փոքրիկ գյուղ էր:

ԺԸ դարում Անին ավերակների կույտ էր և պատկանում էր թուրք բեկերին:

1878 թ. երբեմնի քաղաքն անցնում է Ռուսաստանին:

1892-1916 թթ. Անիում հնագիտական պեղումներով ուղեկցվող ուսումնասիրություններ է իրականացնում Նիկողայոս Մառը: Տարիների ընթացքում աշխատանքներին մասնակցում են հատկապես հայ մասնագետները՝ Թորոս Թորամանյանը, Աշխարհբեկ Քալանթարը, Նիկողայոս Ադոնցը, Արամ Վրույրը, Նիկողայոս Բունիաթյանը և ուրիշներ:

1918 թ. Անի են ներխուժում թուրքական զորքերը և հաշված ժամերում ավերում և փոշիացնում տարիների տքնանքով և գիտական անձանձիր աշխատանքով ամբողջացված Անիի պատմական թանգարանի («Հնադարան Անւոյ») նյութերը:

Թանգարանային սակավաթիվ փրկված արժեքներն իրենց հանգրվանն են գտնում Հայաստանի Հանրապետության պատմության թանգարանում:

1918-20 թթ. Անին Կարսի մարզի հետ ներառվում է Հայաստանի Հանրապետության կազմի մեջ, սակայն 1920 թ. հոկտեմբերին Անին և Կարսի մարզն ամբողջությամբ կրկին զավթում են թուրքերը: Մեկ տարի անց առանց հայկական կողմի համաձայնության բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև կնքված Կարսի պայմանագրով մարզը բռնակցվում է Թուրքիային:

Դրանով ընդհատվում են Անիում շուրջ քառորդ դար իրականացված հնագիտական ուսումնասիրությունները: Քայքայվում, անհետանում են պեղումների շնորհիվ բացված, բայց անտերության մատնված մեծաթիվ նյութեր՝ վիմագիր արձանագրություններ, ճարտարապետական և զարդաքանդակ բեկորներ, զանազան կառույցների առանձին հատվածներ և հնագիտական իրեր:

Տևական ընդմիջումից հետո՝ սկսած 1990-ական թվականների վերջերից, Անիում առանց հայ մասնագետների մասնակցության հնագիտական պեղումներ, ինչպես նաև հուշարձանների մասնակի կամ ամբողջական ամրակայման և վերականգնման աշխատանքներ են իրականացնում թուրք մասնագետները: Սակայն ակներև է, որ այդ աշխատանքները մեծ մասամբ իրականացվել են և այժմ էլ շարունակվում են հուշարձանների վերականգնման գիտական նորմերի անտեսմամբ և, առավել ցավալի է, հաճախ նաև յուրացման ակնհայտ միտումներով:

A Brief Historical Introduction

The ghost city of Ani is situated on the right bank of the river Akhurian, in Shirak District (present-day Kars Province of Turkey), Ayrarat Province, Armenia Major, 30 kms south-west of Gyumri City of the Republic of Armenia. The city site extends on a triangular cape which is enclosed within the gorges of Igadzor, Tzaghkotsadzor and Gayladzor, and occupies an area of over 150 hectares, its average altitude above sea level amounting to 1,500 metres.

In times of high antiquity, the site of the future city comprised an inhabited locality with a field of tombs and burial mounds (8th to 7th centuries B.C.) lying in its neighbourhood.

In Armenian historiography, Ani is first mentioned by 5th-century historiographers Yeghishe and Ghazar Parpetsy as an impregnable castle. In the early Middle Ages, it formed part of the possessions of the prominent Kamsarakan family together with the districts of Shirak and Arsharunik.

In the '80s of the 8th century, prince of Armenia Ashot Bagratid the Meat-Eater (*Msaker*) purchased Arsharunik and Shirak Districts, as well as the castle of Ani from the Kamsarakans and made them part of his estates.

By the late 9th century, Ani had already grown to a village town.

In 961 the Bagratids moved their court from Kars to Ani and made it the capital of their kingdom. In 964 King Ashot III the Merciful (*Voghormatz*) erected powerful ramparts on the narrow strip of the cape, north of the castle—later they were named Ashotashen (i.e. *'built by Ashot'*) Ramparts after the king.

Located on the important commercial route of Dvin-Trabzon, Ani started developing rapidly, its fast growth making King Smbat II (977 to 989) construct the second row of ramparts named Smbatashen (i.e. *'built by Smbat')* in 989. These fortified walls ran along the edges of Tzaghkotsadzor and Igadzor, reached Gayladzor, then continued along the gorge of the Akhurian and enclosed the newly-built part of the city.

It was particularly during the peaceful years of the reign of Gagik I (989 to 1020) that Ani enjoyed a period of great development.

The metropolis of Ani had commercial ties with Byzantium, Persia, the Arabic countries, South Russia and Middle Asia. The construction activity unfolded in the city was particularly large-scale and in full swing—something unprecedented in its history—during the period when it was the capital of Armenia: a great number of public and religious buildings were erected there one after another.

In the 11th century, Ani was a renowned city with trade unions and over 100,000 inhabitants.

The domestic split that the country faced after Gagik I's death shattered the foundations of the Armenian statehood. The struggle for the royal throne grew especially bitter between Gagik I's sons, King Hovhannes-Smbat and his brother Ashot IV. Fearing the possible invasion of the Byzantine army, which had already crushed the revolt in Tayk, Hovhannes-Smbat, who was not endowed with a strong will-power, bequeathed Ani and its vicinity to the Byzantine Empire in 1023. After Hovhannes-Smbat and Ashot IV had died, Catholicos Petros Getadardz I and Prince West Sargis attempted to execute this will through the support of their followers, but they encountered resistance on the part of some of the nobility and the city population. Late in 1042, those concerned with preserving the statehood of Armenia—their leader was Vahram Pahlavuny—declared Ashot IV's son, young Gagik II (1042 to 1045), king of the country. Between 1043 and 1044, the Byzantine troops sieged Ani for several times demanding its surrender, but thanks to the self-defence organised by army leader Vahram Pahlavuny, it remained inaccessible for the enemy. However, in 1045 King Gagik II was treacherously summoned to Constantinople, where he was dethroned.

Thus, Byzantium achieved the goal it had been pursuing, but in fact, in the meantime, it also struck its own death-blow, for the conquest of Ani and the fall of the Armenian statehood

marked the destruction of the powerful stronghold on the eastern border of the empire, which was indispensable for the repulsion of the Seljuk inroads.

In 1064, during their third invasion of Armenia, the Seljuks took Ani.

In 1072 Emir of Dvin Abulsuar purchased Ani from Seljuk warlord Alp-Aslan and put it into his son Manuche's possession, this marking the establishment of Shaddadian Principality of Ani, which existed at intervals until 1199.

In the 12th century, the Armeno-Georgian united forces entered Ani for several times.

In 1199 Ani was liberated and shifted into the Zakarians' possession, but in 1236 it was sieged and conquered by the Mongols through perfidy. In 1249 and 1260 the inhabitants of the city rose in rebellion against their Mongol masters, but in vain.

The city of Ani existed until the mid-14th century—it continued its subsistence even after the disastrous earthquake of 1319, but Timur's incursion at the end of the same century and the cruelty with which the successive foreign rulers treated the local population gave rise to large-scale emigration to Georgia, South Russia and the Crimea.

By the 16th century, Ani had been reduced to a small village.

In the 18th century, Ani represented but a heap of ruins in the possession of some Turkish beys.

In 1878 Russia took control over what was left of the once large and prospering city.

Between 1892 and 1916, Nicholas Marr conducted scientific research and archaeological excavations in Ani with the participation of Armenian specialists, including Toros Toramanian, Ashkharbek Kalantar, Nicholas Adontz, Aram Vruyr, Nikoghayos Buniatian and others.

In 1918 Ani was invaded by the Turks, in the aftermath of which, the materials and exhibits of its historical museum (*Repository of Ani*), which had been collected through many years of hard toil and tireless scientific research, were destroyed within just a few hours.

The few exhibits which had survived this inroad were consigned to the State History Museum of the Republic of Armenia.

During 1918 to 1920, Ani formed part of the Republic of Armenia together with the region of Kars, but in October 1920, both of them were again occupied by the Turks. A year later, without the consent of the Armenian side, the Bolsheviks of Russia and Kemalist Turkey signed the treaty of Kars, under which the region was annexed to Turkey.

This marked the end of the archaeological exploration that had been in process in Ani for over a quarter of a century. As a result of it, a large number of finds—lapidary inscriptions, architectural pieces and ornamented fragments, parts of various buildings and archaeological items—were doomed to neglect, which led to their decay and final loss.

After a great interval, in the late 1990s, Turkish specialists started archaeological excavations in Ani, where they have also carried out partial or thorough conservation and restoration of monuments since the period specified. However, no Armenian experts have ever been engaged in this work, which is evidently implemented with flagrant violations of the scientific norms of restoration. What is even more regrettable, these actions often simply pursue the aim of appropriating the Armenian monuments of the city site.

Краткий исторический очерк

Развалины столицы Ани находятся в регионе Ширак Айраратской области Великой Армении (провинция Карс современной Турции), в 30 км юго-западнее города Гюмри, на правом берегу реки Ахурян. Городище, расположенное на треугольном мысе, разделенном ущельями Игадзор, Цахкоцадзор и Гайладзор, занимает площадь около 150 га и находится на высоте примерно 1500 м над уровнем моря.

С древних времен на месте Ани было поселение, а в окрестностях—некрополь VIII-VII веков до н.э.

В армянской историографии Ани, как неприступная крепость, впервые упоминается историками V века Егише и Лазарем Парпеци. В раннем средневековье наряду с регионами Ширак и Аршаруник Ани принадлежал известному нахарарскому роду Камсараканов.

В 80-е годы VIII века армянский князь Ашот Мсакер (Мясоед) Багратуни выкупил у Камсараканов регионы Аршаруник и Ширак (с крепостью Ани) и присоединил к своим владениям.

В конце IX века Ани уже был поселком городского типа.

В 961 году Багратиды перенесли царскую резиденцию из Карса в Ани и провозгласили его столицей. В 964 году царь Ашот III Милостивый к северу от крепости, в узкой части мыса, построил мощные стены, названные впоследствии его именем—Ашоташен.

Находясь на важной торговой дороге Двин-Трабзон, Ани стал быстро развиваться. Быстрый рост города заставил Смбата II (977-989) в 989 году построить вторые стены—Смбаташен, которые проходили по краям ущелий Игадзор и Цахкоцадзор, соединялись с ущельем Гайладзор, далее продолжались по краям ущелья реки Ахурян и окружали часть недавно построенного города.

Бурный расцвет Ани пришелся на мирные годы царствования Гагика I (989-1020).

Столица Армении Ани находилась в торговых связях с Византией, Персией, арабскими странами, Южной Россией и Средней Азией. В этот период застройка Ани осуществлялась в невиданно бурном темпе. Друг за другом в городе создавались многочисленные общественные и религиозные постройки.

В XI веке Ани был крупным торгово-ремесленным городом, имеющим стотысячное население.

После смерти Гагика I внутренние распри пошатнули основы государственности. Борьба за трон особенно обострилась между его сыновьями—царем Ованесом-Смбатом и его братом—Ашотом IV. Слабовольный Ованес-Смбат, опасаясь вторжения византийской армии, подавившей восстание в Тайке, в 1023 г. завещал Византии Ани с его окрестностями. После смерти Ованеса-Смбата и Ашота IV католикос Петрос I Гетадарц и князь Вест Саркис вместе с единомышленниками хотели выполнить завещание, сдав Ани, однако встретили сопротивление со стороны городского населения и части знати. С целью сохранения государственности, под предводительством Ваграма Пахлавуни в конце 1042 года был коронован сын Ашота IV—юный Гагик II (1042-1045). В 1043-1044 годах византийские войска несколько раз осаждали город, требуя его сдачи. Под предводительством командующего войском Ваграма Пахлавуни была организована оборона Ани, который остался неприступным. Однако в 1045 году царя Гагика II обманом вызвали в Константинополь и лишили престола.

Этим Византийская империя достигла своей цели и, в сущности, подписала себе смертный приговор, так как со взятием Ани и уничтожением армянской государственности обрушился находящийся на восточной границе мощный оплот, который был нужен и мог противостоять нашествиям сельджуков.

Во время третьего нашествия на Армению в 1064 году сельджуки захватили Ани.

В 1072 году эмир Двина Абулсуар выкупил Ани у военачальника сельджуков Алп-Аслана и передал своему сыну Манучэ. Этим была положена основа правления Шеддадидов, которая с перерывами длилась до 1199 года.

В XII веке Ани несколько раз был захвачен объединенными армяно-грузинскими войсками.

В 1199 году Ани был освобожден и перешел к Захаридам, однако в 1236 году был осажден и вероломно захвачен монголами. Восстания анийцев в 1249 и 1260 годах не увенчались успехом.

До середины XIV века, даже после разрушительного землетрясения 1319 года, Ани как город еще сохранял свое существование. Однако в конце века нашествие Тамерлана и установленная сменявшими друг друга чужеземными правителями жестокая политика привели к эмиграции большей части населения в другие страны: Грузию, Южную Россию, Крым.

В XVI веке Ани был маленьким селом.

В XVIII веке Ани был грудой развалин и принадлежал турецким бекам.

В 1878 году Ани, бывший некогда городом, перешел к России.

В 1892-1916 годах Н.Я. Марр произвел исследования Ани, сопровождая их археологическими раскопками. На протяжении лет в работах принимали участие и армянские специалисты: Торос Тораманян, Ашхарбек Калантар, Николай Адонц, Арам Вруйр, Николай Буниатян и другие.

В 1918 году в Ани вторглись турецкие войска и за считанные часы уничтожили и превратили в пыль собранные воедино за годы кропотливого и неустанного научного труда экспонаты Исторического музея Ани (Анийского музея древностей).

В 1918-1920 годах Ани вместе с Карсской областью вошел в состав Республики Армения, но в октябре 1920 года Ани и вся Карсская область были вновь захвачены турками и по Карсскому договору, подписанному большевистской Россией с кемалийской Турцией, без согласия армянской стороны, присоединены к Турции.

На этом прерываются длившиеся около четверти века археологические исследования в Ани. Разрушаются и исчезают открытые благодаря раскопкам, но преданные забвению, многочисленные материалы: высеченные на стенах надписи, архитектурные и орнаментальные фрагменты, отдельные части различных сооружений и археологические предметы.

После длительного перерыва, начиная с конца 1990-х годов, в Ани турецкие специалисты, без участия армянских специалистов, производят археологические раскопки, а также работы по частичному или полному укреплению и восстановлению памятников. Однако очевидно, что эти работы большей частью осуществлялись и сегодня продолжаются с игнорированием научных норм восстановления памятников и, что особенно прискорбно, с явной тенденцией умышленного присвоения.

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ | DEFENSIVE INSTALLATIONS | ОБОРОНИТЕЛЬНАЯ СИСТЕМА



1. ԱՂՋԿԱԲԵՐԴ	AGHJKABERD	АХЧКАБЕРД
2. ՄԻՋՆԱԲԵՐԴ	THE CITADEL	ЦИТАДЕЛЬ
3. ԱՇՈՏՅԱՆ ՊԱՐԻՍՊՆԵՐ	ASHOT's RAMPARTS	АШОТОВЫ СТЕНЫ
4. ՍՄԲԱՏՅԱՆ ՊԱՐԻՍՊՆԵՐ	SMBAT's RAMPARTS	СМБАТОВЫ СТЕНЫ

ՄԻՋՆԱԲԵՐԴ | THE CITADEL | ЦИТАДЕЛЬ

Անի քաղաքատեղիի տարածքում բնակության համար բնությունից ընձեռված հարմարավետ վայրը նաև պաշտպանության տեսանկյունից ապահովելու և անխոցելի դարձնելու նպատակով առկա են պատմական ամենատարբեր ժամանակներում ստեղծված պաշտպանական կառույցներ:

Սկսած կիկլոպյան բերդաշինության ժամանակներից մինչև զարգացած միջնադար՝ Անին պարբերաբար ամրացվել և հզորացվել է տվյալ ժամանակաշրջանի թշնամու ռազմուժին հաջողությամբ դիմակայելու նպատակով, որն էլ ամբողջացվել և իր կատարելությանն է հասել հատկապես քաղաքի՝ թագավորանիստ եղած տարիներին (961-1045 թթ.):

Քաղաքի պաշտպանական համակարգը բաղկացած էր օրգանապես իրար միացած երեք միավորից՝ Միջնաբերդ, Աղջկաբերդ և Նոր քաղաք:

Բացի այդ՝ քաղաքն ուներ նախքան Անի հասնելը թշնամու կասեցմանը ծառայող այսպես կոչված իր արբանյակ բերդերը, որոնցից էին Տիգնիսն ու Մաղասբերդը:

The part of Ani which is naturally endowed with all favourable conditions for human habitation also comprises a number of defensive structures erected in different periods of time to make it protected and invulnerable.

From the times of cyclopean castles until the High Middle Ages, Ani was periodically fortified to have enough power to successfully resist the armed forces of the enemies of the given period. The strengthening of the city reached its climax particularly in the years (961 to 1045) when it was a royal residence.

The defence system of Ani included three fortifications which were organically connected with each other—the Citadel, Aghjkaberd and Nor Kaghak (the Armenian equivalent for *New City*).

Apart from them, Ani also had so-called satellite castles, such as Tignis and Maghasberd, which were to ward off the enemy before they reached the city.

Для того, чтобы обеспечить оборону и сделать неуязвимой предоставленную природой, удобную для проживания местность, на территории городища Ани наличествуют созданные в различные исторические времена оборонительные сооружения.

Начиная со времен сооружения киклопических крепостей и до развитого средневековья, Ани периодически укреплялся и усиливался, с целью успешного сопротивления вражеским войскам данного периода, достигнув своего совершенства особенно в те годы, когда город был столицей (961-1045).

Оборонительная система города состояла из трех органически связанных единиц: Цитадели, Ахчкаберда (Девичьей крепости) и Нового города.

Кроме того, город имел так называемые крепости-спутники (Тигнис и Магасберд), служившие для задержания врага еще до того, как он достигнет Ани.

1






0
10
20
30
40
50 մ

6
7



ΥΙΟΚΡΑΤΟΡΟΣ

ԱՇՈՏՅԱՆ ՊԱՐԻՍՊՆԵՐ | ASHOT's RAMPARTS | АШОТОВЫ СТЕНЫ



ԱՂՋԿԱԲԵՐԴ | AGHJKABERD (Girl's Castle) | АХЧКАБЕРД (Девичья крепость)

ՍՄԲԱՏՅԱՆ ՊԱՐԻՍՊՆԵՐ | SMBAT's RAMPARTS | СМБАТОВЫ СТЕНЫ



ԱՎԱԳ ԴՈՒՌ | AVAG (PRINCIPAL) GATE | ГЛАВНЫЕ (АВАГ) ВОРОТА

ԿԱՐՈՒՑ ԴՈՒՌ | KAROOTS (KARS) GATE | КАРССКИЕ (КАРУЦ) ВОРОТА


0
10
20 մ

ՆՈՐ ԴՎՆՈ ԴՈՒՌ | NOR DVNO (NEW DVIN) GATE | НОВЫЕ ДВИНСКИЕ (НОР ДВНО) ВОРОТА






0
10
20 մ

ԳԱՅԼԱՁՈՐԻ ԴՈՒՌ | GATE OF GAYLADZOR | ГАЙЛАДЗОРСКИЕ ВОРОТА



ԱՌՅՈՒԾԻ ԴՈՒՌ | ARYOOTZ's GATE | ВОРОТА АРЮЦА

55	56
57	58

ԻԳԱԶՈՐԻ ԴՈՒՌ | GATE OF IGADZOR | ИГАДЗОРСКИЕ ВОРОТА

ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏՎԱԾԸ | EASTERN SECTION OF THE CITY WALLS | ВОСТОЧНАЯ ЧАСТЬ КРЕПОСТНЫХ СТЕН

ՄԽԻԹԱՐԻՉԻ ԱՇՏԱՐԱԿ, Ձ | TOWER OF MKHITARICH, № 6 | БАШНЯ МХИТАРИЧА, № 6

ՍԱՐԳԻՍԻ ԱՇՏԱՐԱԿ, Ժ | TOWER OF SARGIS, № 10 | БАШНЯ САРКИСА, № 10



ՍՊԱՍԱԼԱՐՅԱՆ ԱՇՏԱՐԱԿ, ԼՌ | SPASALAR's TOWER, № 34 | БАШНЯ СПАСАЛАРА, № 34

ՇԱՆՈՒՇԻ ԱՇՏԱՐԱԿ, ԽԳ | TOWER OF SHANOOSH, № 46 | БАШНЯ ШАНУША, № 46



ԱՐՔՈՒՆԻ ԵՎ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔՆԵՐ

ROYAL AND PRINCELY RESIDENCES

ЦАРСКИЕ И КНЯЖЕСКИЕ ДВОРЦЫ

Ճիշտ է, միջնադարյան Հայաստանի բազմաթիվ այլ մեծ ու փոքր մայրաքաղաքներում նույնպես եղել են արքունի (Կարսում, Բագարանում), իսկ ամրացված զանազան բնակավայրերում կամ բերդերում էլ՝ իշխանական ապարանքներ, սակայն վերջիններս առավելաբար ներկայանում են որպես դղյակ-ամրոցներ (Ամբերդ, Ներքին Դաշտադեմ), մինչդեռ Անիում պահպանված ապարանքները մաս են կազմում քաղաքային միջավայրի և ընդհանուր կառուցապատման: Ընդսմին հատկանշական է, որ Անիի Պահլավունյաց կամ Սարգսի ապարանքները, արդեն իսկ ամրացված քաղաքի ներսում գտնվելով, չունեն սեփական պաշտպանական շինություններ, այլ փոխարենն աչքի են ընկնում մայրաքաղաքային կեցությամբ պայմանավորված հարուստ և շքեղ հարդարանքով: Ոճական-գեղարվերստական լուծումներ, որպիսիք Անիում հանդիպում են նաև հասարակական այլ կառույցներում, իսկ Անիից դուրս՝ գրեթե բացառապես միայն պաշտամունքային համալիրներում (Նոր Վարագավանք, Բարձրաքաշի վանք և այլն):

Indeed, regal palaces existed in numerous other large and small medieval Armenian capitals such as Kars and Bagaran; there were princely mansions in various fortified places or castles, but these were mostly strengthened palaces (Amberd, Nerkin Dashtadem), whereas those preserved in Ani form an integral part of the general municipal environment and the construction scheme of the city. It is noteworthy that the Pahlavunies' or Sargis's residences do not have their separate defensive installations, for they are situated within the fortified city. Instead, they are distinguished for their magnificent stylistic and artistic ornamentation which is typical of edifices situated in capital cities and can be seen in other public buildings in Ani. Outside the city, such patterns of embellishment are found almost exceptionally in religious complexes such as Nor Varag and Bardzrakash Monasteries, etc.

Известно, что во многих малых и средних столицах средневековой Армении также существовали царские дворцы (в Карсе, Багаране), а в различных укрепленных поселениях или крепостях-княжеские дворцы, однако последние преимущественно представляются как крепости-замки (Амберд, Неркин Дашадем), в то время как сохранившиеся в Ани дворцы составляют часть городской среды и общей застройки. При всем этом примечательно, что дворцы Пахлавуни и Саркиса, находясь внутри уже укрепленного города, не имеют собственных оборонительных сооружений, а наоборот, бросаются в глаза свойственным столичному укладу богатым и роскошным убранством, стилистическими и художественными решениями, встречающимися в других общественных сооружениях Ани, а вне Ани—исключительно в культовых комплексах (монастыри Нор Варагаванк, Бардзракаш и т.д.).

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԱՐՔՈՒՆԻ ԱՊԱՐԱՆՔ | THE BAGRATIDS' ROYAL RESIDENCE | ЦАРСКИЙ ДВОРЕЦ БАГРАТИДОВ

ՊԱՀԼԱՎՈՒՆՅԱՑ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔ

THE PAHLAVUNIES' PRINCELY RESIDENCE

КНЯЖЕСКИЙ ДВОРЕЦ ПАХЛАВУНИ







ՍԱՐԳԻՍ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔ

SARGIS's PRINCELY MANSION

КНЯЖЕСКИЙ ДВОРЕЦ САРКИСА





ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

RESIDENTIAL AND PUBLIC BUILDINGS

ЖИЛЫЕ И ОБЩЕСТВЕННЫЕ СООРУЖЕНИЯ



118 120 121 122 119 123


0
10
20 մ


0
10
20 մ









ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

ENGINEERING AND PRODUCTION WORKS

ИНЖЕНЕРНЫЕ И ПРОИЗВОДСТВЕННЫЕ СООРУЖЕНИЯ



ԱՆԻ



147 149 150 148 151 152

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ | BUILDINGS OF WORSHIP | КУЛЬТОВЫЕ СООРУЖЕНИЯ



Կասկածից վեր է, որ Անիում քրիստոնեական պաշտամունքային կառույց կամ կառույցներ եղել են արդեն հայ նախարարական Կամսարական տոհմի տիրապետության ժամանակ, սակայն կանգուն կամ պեղումների շնորհիվ բացահայտված եկեղեցիներից և ոչ մեկը, ըստ էության, Ժ դարից ավելի վաղ չի թվագրվում: Երևույթ, որ, կարծում ենք, կարելի է բացատրել Անիի ծաղկման շրջանում լայն ծավալներով կառուցապատվող քաղաքում հին կառույցների հիմնավոր վերաշինության իրողության հետ:

Մինչև ԺԴ դարի սկզբներն իր գոյությունը վերելքներով և վայրէջքներով պահպանած քաղաքում վերջին եկեղեցիները կառուցվել են ԺԳ դարի սկզբներին:

Բանահյուսության մեջ հազար ու մեկ եկեղեցիների քաղաք անունը ստացած Անիի եկեղեցիների իրական թվաքանակի մասին ստույգ տեղեկություններ մեզ չեն հասել:

Հայտնի է, սակայն, որ 1064 թ. Ալփ-Ասլանի՝ Անին գրավելու ժամանակ քաղաքը, բացի բազմաթիվ բարձր շինություններից, ուներ 400 եկեղեցի:

Արդեն ԺԹ դարի սկզբին Անի այցելած ճանապարհորդները քաղաքում հաշվել են շուրջ 40 եկեղեցի, իսկ նույն դարի վերջերին, երբ Ն. Մառի գլխավորությամբ սկիզբ է դրվել Անիի ուսումնասիրությանը, քաղաքատեղիի տարածքում կանգուն, կիսավեր կամ սոսկ նկատվելու չափ պահպանված է եղել միայն 16 եկեղեցի:

Անիի՝ ճարտարապետականորեն առավել մեծարժեք և նշանավոր եկեղեցիները վեր են հառնել հատկապես Ժ-ԺԱ դարերում:

Դավանաբանորեն Անիի բոլոր եկեղեցիները, բացառությամբ վրաց քաղաքական գերիշխանության ժամանակաշրջանում (ԺԲ-ԺԳ դդ.) աշխուժացած քաղաքի բյուզանդածես եկեղեցու հետևորդ հայ քաղկեդոնական համայնքին պատկանող մեկ (պայմանականորեն հայտնի է «Վրացական» անունով) և ժամանակավորապես նույն համայնքին անցած Տիգրան Հոնենցի եկեղեցիների, եղել են հայ առաքելական:

Սելջուկ թուրքերի տիրապետության շրջանում քաղաքում երևան է եկել երկու մզկիթ: Դրանցից մեկը՝ Աբուլ Մամրան կոչվածը, եղել է նորինորո կառուցված շենք, իսկ Մանուչեի մզկիթը հիմնվել է քաղաքի հասարակական կառույցներից մեկի յուրացման միջոցով: Թուրքերի տիրապետության ընթացքում միառժամանակ մզկիթի է վերածվել նաև Մայր տաճարը:

1904-1915 թթ. փլուզումից փրկելու նպատակով Անիում մասնակի նորոգություններ և ամրակայման են ենթարկվել Սբ. Փրկիչ, Սբ. Առաքելոց, «Վրացական» եկեղեցիները:

2009 թ.-ից ի վեր առանց բնագավառի փորձառություն ունեցող վերականգնող հայազգի ճարտարապետների մասնակցության Անիում եկեղեցիների վերականգնման աշխատանքներ է ծավալում Թուրքիայի մշակույթի նախարարությունը:

It is beyond doubt that Ani had a place or places of Christian worship as early as the times of the Kamsarakans' reign, but the oldest of the churches preserved standing in the city site or unearthed during the excavations date back to only the 10th century. This may be explained by the fact that during the period of the growth of Ani, when large-scale construction activity was unfolded in the city, the old structures underwent a thorough reconstruction there.

The city preserved its existence, marked by ups and downs, until the early 14th century, the last churches erected there tracing back to the beginning of the 13th century.

We do not have at our disposal any information regarding the exact number of the churches in Ani, which is called *City of a Thousand and One Churches* in folklore.

In 1064, when Alp-Aslan took Ani, it had 400 churches apart from numerous tall buildings.

The travellers who visited Ani in the early 19th century counted over 40 churches there, whereas at the end of the same century, when N. Marr started excavations in the city site, it had only 16 churches—standing, semi-ruined or others that could hardly be discerned.

Those of the churches of Ani which are remarkable for their great architectural value were erected particularly between the 10th and 11th centuries.

From a religious standpoint, all the places of worship in Ani belong to the Armenian Apostolic faith with two exceptions: the one conventionally called "Georgian," which belonged to the city's Armenian Chalcedonian community adhering to the Byzantine Church—its followers grew particularly active during the period of Georgia's political supremacy, namely, between the 12th and 13th centuries—and Tigran Honents Monastery, which served the followers of this denomination for some time.

During the Seljuk Turks' reign, two mosques were erected in Ani: one of them, which was called Abul Mamran, was built as a completely new structure, while the other, the mosque of Manuche, came into being through the appropriation of one of the public buildings of the city. Under the Turks, the Cathedral was changed into a mosque and served as such for some time.

From 1904 until 1915, Sourb Prkich (*Holy Saviour*) and Sourb Arakelots (*Holy Apostles'*) Churches, as well as the one named "Georgian" underwent partial repairs and conservation to escape collapse.

Since 2009 Turkey's Ministry of Culture has been implementing restoration in some of the churches of Ani without the participation of Armenian architects who have wide experience in this.

Вне всякого сомнения, христианское культовое сооружение (или сооружения) существовало в Ани еще во времена господства армянского княжеского рода Камсараканов, но ни одна из существующих или найденных благодаря раскопкам церквей, по сути, не датируется ранее X века. Явление, которое, по нашему мнению, можно объяснить фактом основательной перестройки старых сооружений во время крупномасштабного строительства города в период расцвета Ани.

В городе, сохранившем до начала XIV века свое существование после расцветов и упадков, последние церкви были построены в начале XIII века.

До нас не дошли точные сведения об истинном количестве церквей Ани, получившем в устном народном творчестве название "города 1001 церкви".

Однако известно, что в 1064 году во время взятия города Алп-Асланом, в Ани, кроме многочисленных высоких построек, было 400 церквей.

Посетившие Ани в начале XIX века путешественники насчитали около 40 церквей, а в конце того же века, когда под руководством Н.Я. Марра было положено начало изучению Ани, на территории городища насчитывалось только 16 церквей, сохранившихся в целостности, полуразрушенном или едва приметном состоянии.

С точки зрения архитектуры, наиболее ценные и известные церкви Ани были возведены в X-XI веках.

По конфессии, все церкви Ани, за исключением одной (условно известной как "Грузинская"), принадлежавшей общине армян-халкидонитов—последователей греческой православной церкви, построенной в оживленном городе в период грузинского политического господства (XII-XIII вв.) и временно перешедшей к той же общине церкви Тиграна Оненца, принадлежали к Армянской Апостольской Церкви.

Во время господства турок-сельджуков в городе были построены две мечети. Одна из них—Абул Мамран, была построена заново, а мечеть Манучэ—посредством присвоения одного из городских общественных сооружений. В период турецкого господства был временно превращен в мечеть и Кафедральный собор.

В 1904-1915 годах, с целью спасения от разрушения, в Ани были частично обновлены и подверглись укреплению церкви Сурб Пркич (Св. Спасителя), Сурб Аракелоц (Св. Апостолов), "Грузинская".

С 2009 года и по сей день, без участия имеющих опыт работы в данной области армянских архитекторов-реставраторов, Министерством культуры Турции осуществляются восстановительные работы анийских церквей.

ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ԱՐՔՈՒՆԻ ԵԿԵՂԵՑԻ | ROYAL CHURCH OF THE CITADEL | ДВОРЦОВАЯ ЦЕРКОВЬ ЦИТАДЕЛИ

Միջնաբերդի արքունի եկեղեցին գտնվում է ապարանքի հարավարևելյան կողմում:

Կառուցման ժամանակի վերաբերյալ առավել փաստարկված և համոզիչ է Հ. Օրբելու եզրակացությունը, ըստ որի՝ եկեղեցին թվագրվում է Ժ-ԺԱ դարերով:

Հորինվածքային որոշ դրվագներ, սակայն, ինչպես հարավային ճակատի արևելյան մասում կիսաբոլորակ որմնախորշի առկայությունն ինքնին և նույն խորշի՝ հատկապես վաղ միջնադարին բնորոշ որմնախոյակի հարդարանքը թույլ են տալիս ենթադրելու, որ Բագրատունյաց թագավորության շրջանում եկեղեցին հնի տեղում հիմնավորապես վերակառուցված շենք է, որից ներկա շինությանն են փոխանցվել թե՛ հորինվածքային առանձնահատկությունները (ունի միանավ բազիլիկի հորինվածք և 14,8 x 7,4 մ արտաքին չափեր) և թե՛ ճարտարապետական ու հարդարանքի առանձին մանրամասները:

Մինչև Ի դարի կեսերը կանգուն եկեղեցուց ներկայումս անմխիթար վիճակում դեռևս գոյատևում է միայն հյուսիսային որմը:

The monument is situated south-east of the Bagratids' regal residence.

As far as its construction time is concerned, the most substantiated and trustworthy viewpoint is offered by H. Orbeli, according to whom, it was erected between the 10th and 11th centuries. However, certain compositional elements, such as the semi-circular recess found in the eastern part of the southern facade, and the ornamentation of the built-in-wall capital seen in the same recess, which is typical of the Early Middle Ages, give us grounds to suppose that the royal church of the Citadel came into being as a result of the thorough reconstruction of an older one and dates from the Bagratids' times. The composition features and some of the architectural details and patterns of embellishment characteristic of the older monument are found in the present-day one—it is a uni-nave basilica with the following outer dimensions: 14.8 x 7.4 metres.

The regal church of the Citadel was preserved standing until the mid-20th century. At present only its northern wall can be seen.

Дворцовая церковь Цитадели находится на юго-восточной стороне царского дворца.

По поводу времени строительства более аргументирован и убедителен вывод И.А.Орбели, согласно которому церковь датируется X-XI веками.

Но некоторые композиционные детали—наличие полукруглой ниши на восточной стороне южного фасада и декор капители той же ниши, характерный для раннего средневековья, позволяют предположить, что в период царствования Багратидов церковь была основательно перестроена на месте старой, от которой нынешнему сооружению перешли и композиционные особенности (имеет композицию однонефной базилики, внеш. разм. 14,8 x 7,4 м), и отдельные детали архитектуры и убранства.

От простоявшей до середины XX века церкви сегодня сохранилась только северная стена, в неутешительном состоянии.













161	162
163	164
165	166





ՄԻՉՆԱԲԵՐԴԻ ՔԱՌԱԽՈՐԱՆ ԵԿԵՂԵՑԻ

FOUR-APSE CHURCH OF THE CITADEL

ЧЕТЫРЕХАПСИДНАЯ ЦЕРКОВЬ ЦИТАДЕЛИ

Միջնաբերդի քառախորան եկեղեցին գտնվում է Արքունի եկեղեցու հարավարևմտյան կողմում՝ հարավահայաց լեռնալանջի թեքության վրա:

Կառուցման ժամանակը (Ժ-ԺԱ դարեր) որոշվում է ըստ հորինվածքային, կառուցողական առանձնահատկությունների և հարդարանքի պահպանված որոշ դրվագների, մասնավորապես զարդաքանդակ քիվերի և ծածկասալերի համեմատական ուսումնասիրության:

Մինչև ծածկասալ հասնող հարավարևմտյան որմի չնչին մնացորդներով մի կերպ կանգուն եկեղեցին գրեթե նույն դրության մեջ իր գոյությունը պահպանել է մինչև 1960-ական թթ., որից հետո փլուզվել է և ներկա դրությամբ համարյա հավասարվել հողին:

Եկեղեցին ուներ արևելքում զույգ ավանդատներով կենտրոնագմբեթ քառախորան հորինվածք, 6,95 x 7,40 մ արտաքին չափեր:

The four-apse church of the Citadel is situated on a slanting south-facing mountain slope, in the south-west of the royal church.

Its dating (10th to 11th centuries) is determined through a comparative research into its composition and building peculiarities, as well as its decoration elements (particularly, the ornate cornices and roof-covering slabs).

The monument, which remained standing only thanks to the meagre remnants of its south-western wall (it was preserved up to the roof-covering slabs of the building), existed almost in the same state until the 1960s. Later it collapsed and is now almost levelled with the ground.

The church used to represent a central-domed four-apse structure with two vestries in the east. Exterior dimensions: 6.95 x 7.40 metres.

Четырехапсидная церковь Цитадели находится на юго-западной стороне дворцовой церкви, на южном склоне горы.

Время строительства (X-XI века) определяется согласно сравнительному изучению особенностей композиции, строительной техники и некоторых сохранившихся деталей убранства, в частности, орнаментированных карнизов и плит перекрытия.

Едва стоявщая церковь с небольшими остатками юго-западной стены, доходившей до перекрытия, сохраняла свое существование почти в том же состоянии до 1960-х годов, после чего была разрушена и ныне почти сравнялась с землей.

Церковь имела четырехапсидную центрально-купольную композицию с двумя приделами на восточной стороне, внешние размеры – 6,95 x 7,40 м.


0 1 2 3 4 5մ

ԱԲՈՒՂԱՄՐԵՆՑ
ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ

ABUGHAMRENTS
ST. GRIGOR HURCH

ЦЕРКОВЬ
АБУГАМРЕНЦ
СУРБ ГРИГОР

Աբուղամրենց Սբ. Գրիգոր կամ Գրիգոր Պահլավունու եկեղեցին գտնվում է Նոր քաղաքի արևմտյան մասում՝ Ծաղկոցաձորի պռնկին:

Եկեղեցու մուտքի բարավորին 994 թ. փորագրված նվիրատվական արձանագրության առկայությունը հուշում է, որ եկեղեցու կառուցումն ավարտված է եղել մինչ այդ թվականը: Եկեղեցու որմերին առկա ևս մի քանի արձանագրություններից մեկը 1040 թվականից է և վերաբերում է եկեղեցուն հյուսիսից կից կառուցված մատուռ-տապանատանը:

Եռաստիճան որմնախարսխի վրա հենված եկեղեցին ունի արտաքուստ բազմանիստ, ներքուստ վեցխորան կենտրոնագմբեթ հորինվածք: Սալածածկ սրածայր վեղարով ավարտվող բոլորաձև թմբուկից բացված են դեպի ներս լայնացող 12 լուսամուտներ: Միակ մուտքը բացված է հարավարևմտյան նիստից: Ներքուստ պատված է սվաղով: Հարավահայաց նիստին ունի արևային ժամացույց: Արտաքին չափերն են՝ 10,8 x 10,9 մ:

2011 թ. թուրք մասնագետները ձեռնարկել են եկեղեցու վերականգնումը:

The monument which is otherwise also called Church of Grigor Pahlavuny is situated at the edge of Tzaghkotsadzor, in the west of the New City.

Its entrance tympanum is engraved with a donation inscription of 994, which shows that it was completed prior to that year. Its walls bear some inscriptions one of which dates from 1040 and mentions the funerary chapels adjoining it in the north.

Abughamrents St. Grigor rests on a three-step socle and represents a central-domed building which is outwardly polygonal and has six internal apses. Twelve windows widening inward open from the circular tambour which ends in a pointed spire covered with slabs. The only entrance of the church opens from its south-western side. It is plastered inwardly. The south-facing side of the church bears a sundial. Exterior dimensions: 10.8 x 10.9 metres.

Since 2011 the Turkish specialists have been engaged in the restoration of the monument.

Церковь Абугамренц Сурб Григор (Св. Григория) или Григора Пахлавуни находится на западной стороне Нового города, на краю ущелья Цахкоцадзор.

Наличие высеченной на тимпане входа церкви дарственной надписи 994 года подсказывает, что строительство церкви было закончено до указанного года. Еще одна из нескольких надписей на стенах церкви датируется 1040 годом и относится к часовне-кладбищу, построенному рядом с церковью с северной стороны.

Стоящая на трехступенчатом цоколе церковь имеет снаружи многогранную, внутри—шестиапсидную центрально-купольную композицию. В круглом барабане, увенчанном покрытым плитами вытянутым шатром, открыты расширяющиеся вовнутрь 12 окон. Единственный вход открыт с юго-западной грани. Внутри церковь оштукатурена. На южной грани имеет солнечные часы. Внешние размеры – 10,8 x 10,9 м.

В 2011 году турецкие специалисты начали восстановление церкви.












0 1 2 3 4 5 10մ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ | CATHEDRAL | КАФЕДРАЛЬНЫЙ СОБОР

Անիի Կաթողիկե Մայր տաճարը հիրավի ճարտարապետական հանճարի արգասիք է, որը 989 թ. հիմնադրել է Սմբատ Բ Տիեզերակալ Բագրատունի (977-989 թթ.) թագավորը Տրդատ ճարտարապետի ձեռքով: Շինարարական աշխատանքները 11 տարվա ընդհատումից հետո վերսկսվել են 1001 թ. և բարեհաջող ավարտվել 1010 թ. Գագիկ Ա թագավորի (Սմբատ Բ-ի եղբայրը, գահակալել է 989-1020 թթ.) կնոջ՝ Կատրամիդե թագուհու կողմից:

Մայր տաճարը հնգաստիճան որմնախարսխի վրա հենված եռանավ գմբեթավոր բազիլիկ է: Խորանի երկու կողմերում ունի կրկնահարկ ավանդատներ:

Որմերը, հատկապես հարավային և արևմտյան, հարուստ են վիմագրերով (շինարարական քսանմեկտողանի արձանագրությունը հարավային ճակատին է):

Վեղարը պսակած մարդահասակ արծաթե խաչը և Հնդկաստանից բերված բյուրեղապակյա ջահը ոչնչացրել է 1064 թ. Անին նվաճած Ալփ-Ասլանը:

Գմբեթը կործանվել է 1319 թ. երկրաշարժից (այլ վկայությամբ՝ քանդվել է միայն ԺԹ դարի սկզբին):

Տևական անխնամ վիճակի առաջ բերած շարունակական քայքայման արդյունքում Մայր տաճարի հյուսիսային որմի արևմտյան անկյունը փլուզվել է 1988 թ. երկրաշարժի ժամանակ:

Արտաքին չափերն են՝ 34,6 x 22,1 մ:

The Cathedral of Ani is a true masterpiece of architecture founded in 989 by Bagratid King Smbat *Tiezerakal* (*Master of the Universe*) II (977 to 989) and designed by architect Trdat. After an interval of 11 years, its construction resumed in 1001 and was accomplished in 1010 by King Gagik I's (he was Smbat II's brother and held throne from 989 until 1020) wife, Queen Katramide.

The Cathedral represents a tri-nave domed basilica standing on a five-step socle. It has a double-floor sacristy on either side of the chancel.

The walls of the Cathedral—particularly the southern and western ones—abound in inscriptions (its southern facade bears its construction inscription of 21 lines).

The spire of the Cathedral used to be crowned with a silver cross of human height which was destroyed by Alp-Aslan, who conquered Ani in 1064, together with a chandelier of cut glass.

The dome of the Cathedral was ruined by the earthquake of 1319 (another source traces its destruction back to the early 19th century).

Doomed to continual neglect and dilapidation, the western corner of the northern wall of the Cathedral collapsed during the earthquake of 1988. Exterior dimensions: 34.6 x 22.1 metres.

Кафедральный собор Ани—поистине гениальное творение архитектуры, основанное царем Смбатом II Багратуни Тиезеракалом (Миродержцем) (977-989 гг.), во главе с архитектором Трдатом в 989 году. Строительные работы были возобновлены в 1001 году, после 11-летнего перерыва и благополучно завершены в 1010 году супругой царя Гагика I Багратуни (брат Смбата II, царствовал в 989-1020 гг.) – царицей Катрамидэ.

Кафедральный собор—это трехнефная купольная базилика, стоящая на пятиступенчатом цоколе. По обеим сторонам алтарной апсиды имеет двухъярусные приделы.

Стены, особенно южная и западная, богаты надписями (21-строчная строительная надпись находится на южном фасаде).

Венчающий купол серебряный крест в человеческий рост и привезенная из Индии хрустальная люстра были уничтожены в 1064 году при захвате Ани Алп-Асланом.

Купол обрушился во время землетрясения 1319 года (по другому свидетельству, был разрушен в начале XIX века).

От продолжительного разрушения вследствие длительного заброшенного состояния, западный угол северной стены Кафедрального собора обрушился во время землетрясения 1988 года. Внешние размеры – 34,6 x 22,1 м.

205
206









211

212 213 214





224

225



ՎԵՑԽՈՐԱՆ (ԲԱՁՄԱԽՈՐԱՆ) ԵԿԵՂԵՑԻ

SIX-APSE (MULTI-APSE) CHURCH

ШЕСТИАПСИДНАЯ (МНОГОАПСИДНАЯ) ЦЕРКОВЬ



Վեցխորան (մասնագիտական գրականության մեջ ավելի հայտնի է Բազմախորան անվամբ) եկեղեցին գտնվում է Միջնաբերդի հարավային ծայրի՝ ավելի քան 20 մ բարձրություն ունեցող քարաժայռի գլխին:

Թվագրվում է Ժ-ԺԱ դարերով: Պահպանված նվիրատվական բնույթի վիմագրերը վերաբերում են 1170-1190 (հարավարևմտյան նիստի վերնամասում արտաքուստ) և 1320-ական (հարավային որմին ներքուստ) թվականներին:

Համահորինվածք (Արագած, Շուշանիկ, Անիի Աբուղամրենց և Կուսանաց, Գոգյուբա, Կիագմիս-ալթի) այլ եկեղեցիներից առանձնանում է հատկապես արտաքուստ նիստերի անկանոն դասավորվածությամբ և ծավալային բաշխումով: Ունի միայն մեկ մուտք՝ բացված հարավարևմտյան նիստից: Խորանի երկու կողմերում զետեղված են մեկական փոքրածավալ ավանդատներ: Թմբուկը բոլորաձև է, որով էլ պայմանավորված՝ վեղարը կոնաձև է: Հարդարանքի տարրերից են հավասարաթև խաչի մի քանի քանդակները, արտաքին եռանկյուն խորշերի և լուսամուտների պսակները:

Արտաքին չափերն են՝ 9,8 x 9,35 մ:

This is a church of six apses—better known in specialised literature by the name of *Bazmakhoran* meaning *Multi-Apse*—standing on a massive rock of more than 20 metres of height, at the southern extremity of the Citadel.

It is attributed to the period between the 10th and 11th centuries and retains a number of donation inscriptions which date from 1170-1190 (carved externally on the upper part of the south-western facet) and the 1320s (engraved inwardly on the southern wall).

Outwardly, Bazmakhoran differs from other churches of the same composition—Aragatz, Shushanik, Abughamrents and Koosanats of Ani, Gogyuba, Kiagmis-alti—in the irregular arrangement of its facets and their volumetric inaccuracy. It has only a single entrance opening from its south-western side. There is a small vestry on either side of the sanctuary. The tambour is circular, due to which, the spire is conical. The church is embellished with several reliefs of equal-winged crosses. Its outer triangular niches and windows are adorned with crowns.

Exterior dimensions: 9.8 x 9.35 metres.

Шестиапсидная (в специальной литературе более известна под названием Многоапсидная) церковь находится на южной окраине Цитадели, на вершине скалистого утеса, имеющего высоту более 20 м.

Датируется X-XI веками. Сохранившиеся дарственные надписи относятся к 1170-1190 (в верхней части наружной юго-западной грани) и 1320-ым (на внутренней южной стене) годам.

От других церквей той же композиции (Арагац, Шушаник, Абугамренц и Кусанац в Ани, Гогюба, Киагмис-алти) отличается особенно беспорядочной расстановкой внешних граней и распределением объемов. Имеет только один вход, открытый с юго-западной грани. По обеим сторонам алтарной апсиды расположено по одному маленькому приделу. Церковь имеет круглый барабан с коническим покрытием. Элементами декора являются несколько изображений равноконечных крестов, декоративные обрамления внешних треугольных ниш и окон.

Внешние размеры – 9,8 x 9,35 м.


0 1 2 3 4 5м






0 1 2 3 4 5м






0 1 2 3 4 5մ







ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ | DOMED CHURCH OF THE CITADEL | КУПОЛЬНАЯ ЦЕРКОВЬ ЦИТАДЕЛИ

Բուն անունը ցարդ անհայտության մեջ պահված և մասնագիտական գրականության մեջ սոսկ Միջնաբերդի գմբեթավոր տարբերակիչ անվամբ հայտնի եկեղեցին գտնվում է Միջնաբերդի՝ դեպի Ախուրյան գետը հայող (հարավարևելյան) լանջին:

Եկեղեցուց վիմագիր արձանագրություններ մեզ չեն հասել: Լռում են նաև մատենագիր աղբյուրները: Թվագրվում է Ժ-ԺԱ դարերով: Քայքայված դրությամբ կանգուն է եղել մինչև 1960-ական թթ.:

Ունի կենտրոնագմբեթ հորինվածք: Միակ մուտքը բացված է եղել հարավային ճակատից: Խորանի երկու կողմերում ունեցել է ավանդատներ, կոնաձև վեղարի ներքո՝ գլանաձև թմբուկ: Ընդհանուր առմամբ զուսպ հարդարվածքում բացառություն է կազմել հարավային ճակատը, որտեղ թե՛ եռանկյուն խորշերի պսակները և թե՛ մանավանդ մուտքի շրջանակը բավականաչափ պերճաշուք են եղել: Ճակատակալ երիզով ձգվող մուտքի բուսազարդ գոտին ոճական ընդհանրություններ ունի Անիի Սբ. Առաքելոց եկեղեցու հյուսիսային և հարավային մուտքերի ճակատակալ երիզների հետ:

Արտաքին չափերն են՝ 10,7 x 7,9 մ:

The monument whose original name remains obscure is known in specialised literature as the domed church of the Citadel. It is situated on the south-eastern slope of the Citadel facing the river Akhurian.

The lapidary inscriptions of the church have not come down to our days; nor are there any historiographical records bearing reference to it. It traces back to the period between the 10th and 11th centuries and was preserved standing in a dilapidated state until the 1960s.

The church represents a central-domed structure with its only entrance opening from its southern facade. It had a vestry on either side of the sanctuary, its cylindrical drum lying beneath a conical spire. On the whole, the church had a plain ornamentation, the only exception being its southern facade, which had an ornate entrance frame and splendid crowns embellishing its triangular niches. The band of plant ornaments enriching the cornice above the entrance shared common stylistic features with the cornices of the northern and southern entrances of Sourb Arakelots Church of Ani.

Exterior dimensions: 10.7 x 7.9 metres.

Церковь, подлинное название которой и поныне неизвестно и которая упоминается в специальной литературе лишь под дифференцированным названием “купольная церковь Цитадели”, находится на направленном в сторону реки Ахурян юго-восточном склоне Цитадели.

До нас не дошли надписи на церкви. Молчат и летописные источники. Датируется X-XI веками. В разрушенном состоянии простояла до 1960-х годов.

Имеет центрально-купольную композицию. Единственный вход находился в южной стене. По обеим сторонам алтарной апсиды имела приделы, цилиндрический барабан венчался коническим шатром. В общем сдержанном убранстве составлял исключение южный фасад, на котором и завершения треугольных ниш, и тем более обрамление входа были довольно пышно декорированы. Покрытый растительным орнаментом камень над входом имеет стилистическую общность с камнями над северным и южным входами церкви Сурб Аракелоц (Св. Апостолов) в Ани.

Внешние размеры – 10,7 x 7,9 м.





260	261
262	263


0 1 2 3 4 5м

















ՍԲ. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻ | SOURB ARAKELOTS (HOLY APOSTLES') CHURCH | ЦЕРКОВЬ СУРБ АРАКЕЛОЦ (СВ. АПОСТОЛОВ)

Սբ. Առաքելոց եկեղեցին գտնվում է Նոր քաղաքի գրեթե կենտրոնական մասում՝ Մայր տաճար-Գագկաշեն միջակայքում:

Կառուցվել է Ժ-ԺԱ դարերում, ընդ որում, ոչ ուշ, քան 1031 թ.: Եկեղեցու որմերին առկա նվիրատվական այլ վիմագրեր կրում են 1058, 1180 թվականները:

Եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն ծավալների մեջ ներառված, ներքուստ քառախորան, չորս անկյուններում խորանավոր ավանդատներով գմբեթավոր կառույց է: Համաձայն Թ. Թորամանյանի վերակազմության՝ եկեղեցին ավելի փոքր մեկական գմբեթներ է ունեցել նաև կառույցի անկյուններում զետեղված ավանդատների վրա:

Զույգ մուտքերը բացված են հյուսիսային և հարավային ճակատներից (վերջինս՝ ԺԳ դարի սկզբներին կցված գավթի մեջ): Գավթի որմերին առկա են 1212, 1216, 1217, 1220, 1227, 1239, 1251, 1269, 1276, 1277, 1279, 1280, 1289, 1298, 1301, 1320 թթ. արձանագրություններ:

Ինչ վերաբերում է արտաքուստ ուղղանկյուն ծավալի մեջ ներառված անկյունագծային խաչվող կամարներով գավթին, ապա վերջինս աչքի է ընկնում հարդարանքի բացառիկ ճոխությամբ, իսկ առաստաղի խճանկար տարահնար մտահղացումները ներկայանում են որպես գեղագիտության շքահանդես:

Եկեղեցին ունի 21,4 x 19,8 մ, իսկ գավիթը՝ 17,3 x 10,7 մ արտաքին չափեր:

Sourb Arakelots Church is situated in the area between the Cathedral and Gagkashen Church, almost in the centre of the New City.

It was erected between the 10th and 11th centuries, but not later than 1031, for it has a donation inscription dating from the same year. The walls of the church bear other similar inscriptions dated 1058 and 1180.

The church represents a domed structure which is outwardly rectangular and has four apses inwardly. There are sacristies with sanctuaries in its four corners. According to the reconstruction of the church as offered by T. Toramanian, each of the vestries was surmounted by a smaller dome.

The church has two entrances opening from its northern and southern facades. The latter leads into a narthex of the early 13th century the walls of which are engraved with inscriptions dated 1212, 1216, 1217, 1220, 1227, 1239, 1251, 1269, 1276, 1277, 1279, 1280, 1289, 1298, 1301 and 1320.

The narthex represents an outwardly rectangular building with intersecting arches. It is distinguished for its unusually magnificent embellishment—the wide variety of ornamental patterns enriching its ceiling create a mosaic of unsurpassed aesthetic value.

Exterior dimensions of the church: 21.4 x 19.8 metres; those of the narthex: 17.3 x 10.7 metres.

Церковь Сурб Аракелоц (Св. Апостолов) находится почти в центре Нового города, между Кафедральным собором и церковью Гагикашен.

Была построена в X-XI веках, причем не позднее 1031 года. В находящихся на стенах церкви других дарственных надписях упоминаются 1058, 1180 годы.

Церковь монастыря—это снаружи заключенное в прямоугольный объем, а внутри четырехапсидное купольное сооружение, имеющее приделы с апсидами в четырех углах. Согласно реконструкции Т. Тораманяна, церковь имела также по одному более маленькому куполу на угловых приделах.

Два входа в церковь открыты с северной и южной стороны (последний находится в пристроенном в XIII веке притворе). На стенах притвора есть надписи, датируемые 1212, 1216, 1217, 1220, 1227, 1239, 1251, 1269, 1276, 1277, 1279, 1280, 1289, 1298, 1301, 1320 годами.

Что касается вписанного в прямоугольный объем притвора с диагонально пересекающимися арками, то он бросается в глаза исключительным богатством убранства, а разнообразные мозаичные узоры на потолке являются примером эстетичности.

Внешние размеры церкви – 21,4 x 19,8 м, размеры притвора – 17,3 x 10,7 м.



0 1 2 3 4 5 10м



290	291
292	
293	



297
298

ՍԲ. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻ | SOURB ARAKELOTS (HOLY APOSTLES') CHURCH | ЦЕРКОВЬ СУРБ АРАКЕЛОЦ (СВ. АПОСТОЛОВ)

303

ՍԲ. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻ | SOURB ARAKELOTS (HOLY APOSTLES') CHURCH | ЦЕРКОВЬ СУРБ АРАКЕЛОЦ (СВ. АПОСТОЛОВ)





ԳԱԳԿԱՇԵՆ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ | GAGKASHEN ST. GRIGOR CHURCH | ЦЕРКОВЬ ГАГИКАШЕН СУРБ ГРИГОР

Գագկաշենի Սբ. Գրիգոր եկեղեցին գտնվում է Նոր քաղաքի հյուսիսարևմտյան կողմում՝ Սբ. Առաքելոց եկեղեցու և Պահլավունյաց ապարանքի միջև:

Կառուցել է Տրդատ ճարտարապետը 1001-1020 թթ.: Պատվիրատուի՝ Գագիկ թագավորի ցանկությանն ընդառաջ՝ եկեղեցին կառուցվել է՝ հիմք ընդունելով Է դարում ստեղծված Զվարթնոցի եռահարկ խաչաձև կենտրոնագմբեթ հորինվածքը:

Ինչպես ցույց են տվել 1905-1906 թթ. իրականացված հնագիտական պեղումները, եկեղեցին կառուցված է եղել ճարտարագիտական որոշակի թերություններով և քանդվել է ավելի վաղ, քան Անիի մնացած եկեղեցիները:

Պեղումներից հայտնաբերվել է եկեղեցու մանրակերտը ձեռքերին պահած Գագիկ արքայի արձանը: Վերջինս ոչնչացրել են Անի ներխուժած թուրքական զորքերը 1920 թ.: Արձանից միայն մի բեկոր ներկայումս պահվում է Էրզրումի թանգարանում (չունի որևէ բացատրագիր, սակայն թանգարանի աշխատակիցները տգիտաբար գտնում են, որ բեկորն իբր ձկան կամ առյուծի քանդակամաս է):

Արտաքին չափերն են՝ 42,5 x 35,6 մ:

Gagkashen St. Grigor Church is situated in the area between Sourb Arakelots Church and the Pahlavunies' residence, in the north-west of the New City.

It was built by architect Trdat between 1001 and 1020—in accordance with the wish of King Gagik, who had ordered the construction of the monument (hence derives the name of *Gagkashen*, i.e. *built by Gagik*), it was built after the composition of Zvartnots Church (7th century), which represents a cruciform central-domed structure of three floors.

The excavations conducted between 1905 and 1906 revealed that St. Grigor had been erected with some engineering shortcomings, due to which, it was destroyed earlier than the other churches of Ani.

The excavations unearthed the statue of King Gagik holding the model of the church (it had been destroyed by the Turkish invaders of Ani in 1920) in both his hands. At present only a fragment of the statue is kept in the museum of Erzrum without any explanatory note, its employees ignorantly telling visitors that it is the broken part of a fish or lion sculpture.

Exterior dimensions: 42.5 x 35.6 metres.

Церковь Гагикашен Сурб Григор (Св. Григория) находится на северо-западной стороне Нового города между церковью Сурб Аракелоц (Св. Апостолов) и дворцом Пахлавуни.

Построил архитектор Трдат в 1001-1020 годах. Идя навстречу пожеланию заказчика—царя Гагика, церковь построили, приняв за основу трехъярусную центрально-купольную крестообразную композицию храма Звартноц, созданного в VII веке.

Как показали археологические раскопки, проводимые в 1905-1906 годах, церковь была построена с некоторыми инженерными недочетами и разрушилась раньше остальных церквей Ани.

Во время раскопок была обнаружена статуя царя Гагика с моделью церкви в руках. Она была уничтожена вторгшимися в Ани турецкими войсками в 1920 году. Лишь один обломок статуи ныне хранится в музее Эрзрума (не имеет никакой пояснительной надписи, однако служащие музея невежественно полагают, что обломок будто бы является частью скульптуры рыбы или льва).

Внешние размеры церкви – 42,5 x 35,6 м.




0
10
20 մ

ՍԲ. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ | SOURB PRKICH (HOLY SAVIOUR) CHURCH | ЦЕРКОВЬ СУРБ ПРКИЧ (СВ. СПАСИТЕЛЯ)

Սբ. Փրկիչ (Ամենափրկիչ, Ապլղարիբ Պահլավունու) եկեղեցին գտնվում է Նոր քաղաքի արևելյան կողմում:

Կառուցումն ավարտվել է 1035 թ.: Որմերին ունի եկեղեցու շինարարության (1036 և 1040 թթ.), կից զանգակատան կառուցման (1271 թ.), գմբեթի նորոգության (1342 թ.) և զանազան նվիրատվությունների մասին պատմող արձանագրություններ:

Եկեղեցին արտաքուստ բոլորաձևին մոտ, իրականում՝ 19 նիստանի, իսկ ներքուստ 8 խորաններով (7 խորանների համեմատ՝ չափերով կրկնակի մեծ է ավագ խորանը) կենտրոնագմբեթ կառույց է, որով և ներկայանում է որպես Է դարից երևան եկած հորինվածքի (Զորավար, Իրինդ)՝ ԺԱ դարին հարազատ հարդարանքի տարրերով վերարտադրություն: Ունի միայն մեկ մուտք՝ բացված հարավային ճակատից: Ներքուստ սվաղված է և պատված որմնանկարներով:

1912 թ. Ն. Մառի գլխավորությամբ իրականացվել են եկեղեցու ամրակայման աշխատանքներ, սակայն 1920 թ.-ից հետո ձեռնհաս բարձրության սահմաններում կառույցի երեսապատի քարերի հափշտակման պատճառով եկեղեցին կիսով չափ կործանվել է:

Արտաքին չափերն են՝ 15,4 x 15,4 մ:

The monument (otherwise also named Amenaprkich and Church of Apelgharib Pahlavuny) is situated in the east of the New City.

Its construction was completed in 1035. Its walls are engraved with inscriptions commemorating the construction of the church (1036 and 1040); the erection of the adjoining belfry (1271); the renovation of the church dome (1342) and various acts of donation.

Outwardly, the church resembles a circular building, but in fact, it is a central-domed structure of 19 facets, with 8 apses inwardly (the main apse is twice as large as the other 7 ones). Thanks to this, it represents a reproduction of the composition dating back to the 7th century (as seen in Zoravar and Irind) with patterns of decoration typical of the 11th century. It has a single entrance opening from its southern facade. Its interior is plastered and covered with frescoes.

In 1912 N. Marr headed the conservation of the church, but after 1920 its facing stones were gradually stolen to a height reachable for human hands, in consequence of which, it was half destroyed.

Exterior dimensions: 15.4 x 15.4 metres.

Церковь Св. Спасителя (Всеспасителя, Апулгариба Пахлавуни) находится на восточной стороне Нового города.

Строительство закончилось в 1035 году. На стенах церкви есть надписи, повествующие о строительстве церкви (1036 и 1040 гг.) и пристроенной колокольни (1271 г.), ремонте купола (1342 г.) и различных дарах, преподнесенных церкви.

Снаружи церковь почти круглое, а на самом деле состоящее из 19 граней центрально-купольное сооружение, с 8 апсидами внутри (по сравнению с 7 апсидами, алтарная апсида по размеру вдвое больше), этим церковь представляет собой воспроизведение созданной в VII веке композиции (Зоравар, Иринд) с элементами декора, присущими XI веку. Единственный вход открыт с южного фасада. Внутри церковь оштукатурена и покрыта росписями.

В 1912 году под руководством Н.Я. Марра были осуществлены работы по укреплению церкви, но после 1920-ого года, из-за похищения облицовочных камней постройки в пределах достигаемости, церковь наполовину разрушилась.

Внешние размеры церкви – 15,4 x 15,4 м.




0 1 2 3 4 5 10 մ





ՀՈՎՎԻ ԵԿԵՂԵՑԻ | HOVVI (SHEPHERD's) CHURCH | ЦЕРКОВЬ ҺОВИВА (ПАСТУШЬЯ ЦЕРКОВЬ)



Հովվի եկեղեցին գտնվում է Անիի քաղաքային բուն սահմանից կամ Սմբատյան-Զաքարյան պարսպապատից մոտ 1 կմ հյուսիս և համարվում է քաղաքի՝ երբեմնի արվարձանային եկեղեցիներից մեկը:

1908 թ. եկեղեցու վերականգնման գործին հետամուտ՝ ճարտ. Թ. Թորամանյանը 1912 թ. նշել է. «Իր եռայարկ ձևով Հովվիի եկեղեցին Զուարթնոցի և Անիի ս. Գրիգորի մանրանկարն է. ներքին կողմէն, որմասիներէն մեկնող վեց աղեղներու ծայրերը առանց յենարանի կախ մնացած կախարդական երևոյթը, գաղափարով և շինարարական ճարպկութիւնով մի մեծագործութիւն արժէ: Յատակագծի ձևը և արտաքին ակնահաճոյ տեսքը մէկ հատիկ օրինակը կը թուի ինձի ամբողջ պատմական ճարտարապետութեան մէջ»: Ավելացնենք միայն, որ եկեղեցու առաջին հարկի ծածկի նկարագրված լուծման զուգահեռն ունենք Անիի Սբ. Առաքելոց եկեղեցու գավթում:

Կանգուն է եղել մինչև 1960-ական թթ. սկզբները, որից հետո միտումնավոր քանդել են, իսկ քարերի մեծ մասն էլ՝ յուրացրել: 2010 թ. դրությամբ գանձախույզները փորել էին եկեղեցու չնչին մնացորդների հիմքերը:

Արտաքին չափերն են՝ 6,6 x 6,6 մ:

The sanctuary which is situated about a km north of the boundaries of Ani or Smbat's (Zakarian) Ramparts is considered as one of the former suburb churches of the city.

Architect T. Toramanian, who had been engaged in the restoration of the church since 1908, wrote the following in 1912: "With its three-floor structure Hovvi Church might be considered a miniature of Zvartnots and St. Grigor [Church] of Ani. In the interior, the six arches which rest on the pilasters remain hanging in the air without anything to support them, and this is a true masterpiece of creative mind and building sagacity. Its plan and outer attractiveness make it unique and unmatched for me in entire historical architecture." It is worth adding that the overhead covering of the first floor of the church, as described above, has its parallel in the narthex of Sourb Arakelots Church of Ani.

Hovvi Church was preserved standing until the early 1960s, after which it was deliberately destroyed, most of its stones being appropriated. As of 2010, the foundations of its meagre remnants were excavated by gold diggers.

Exterior dimensions: 6.6 x 6.6 metres.

Пастушья церковь находится около 1 км севернее исконных границ города Ани или Смбатовых-Захаридских стен и считается одной из некогда пригородных церквей города.

Следящий за восстановительными работами церкви в 1908 году архитектор Т. Тораманян в 1912 году отметил: "Своим трехъярусным строением Пастушья церковь является миниатюрным воспроизведением Звартноца и церкви Сурб Григор в Ани: внутри концы шести арок полуколонн свисают без опоры—волшебное явление, уникальное своим замыслом и строительной изворотливостью. Форма плана и внешний привлекательный вид кажутся мне единственным образцом во всей исторической архитектуре". Добавим только, что параллель описанного выше перекрытия первого этажа имеется в притворе церкви Сурб Аракелоц (Св. Апостолов) того же Ани.

Церковь простояла до начала 1960-х годов, после чего была умышленно разрушена, а большая часть камней была присвоена. По состоянию на 2010 год, кладоискатели раскопали фундамент небольших уцелевших остатков церкви.

Внешние размеры церкви – 6,6 x 6,6 м.


104







362	364	365
	366	367
363	368	








0 1 2 3 4 5մ







ԱՂՃԿԱԲԵՐԴԻ ՎԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

MONASTIC CHURCH OF AGHJKABERD

ЦЕРКОВЬ МОНАСТЫРЯ АХЧКАБЕРДА



Աղջկաբերդի վանքի եկեղեցին գտնվում է քաղաքատեղիի հարավային ծայրին՝ Ախուրյանի և նրա աջ վտակ Անի գետակի միջև վեր խոյացած ժայռազանգվածի վրա:

Համաձայն ներկայումս փլուզված հարավային պատի՝ ժամանակին ընթերցված արձանագրության՝ եկեղեցին հիմնել է Գրիգոր Լուսավորիչը՝ ըստ ավանդության, կործանելով տեղում գտնված Անահիտ աստվածուհու տաճարը:

Սակայն դարերի ընթացքում Լուսավորչի կառուցած եկեղեցին էլ քայքայվում է, ուստի ԺԲ-ԺԳ դարերում Երկայնաբազուկ իշխանները տեղում կառուցել են տալիս ներկայիս եկեղեցին, որն ունի ուղղանկյուն ծավալների մեջ ներփակված, չորս անկյուններում կրկնահարկ ավանդատներով կենտրոնագմբեթ հորինվածք: Երկու մուտքերը բացված են արևմտյան և հարավային ճակատներից: Եռանկյուն զույգ խորշեր առկա են բոլոր չորս ճակատներում:

1920 թ.-ից հետո եկեղեցին կործանելու նպատակով քանդել-անհետացրել են եկեղեցու երեսապատի հիմնաքարերը: Դրա հետևանքով սոսկ կրաշաղախ կմախքի վրա կանգնած վիճակում են հայտնվել հարավային (արդեն փլուզվել է) և արևելյան ճակատները: Վերջինս յուրաքանչյուր օր կիսում է նույն ճակատագիրը (դավաղիր նույն գործելակերպով 2005 թ. կործանվեց Մրենի տաճարի հարավային ճակատը):

Արտաքին չափերն են՝ 15,4 x 9,7 մ:

The church of Aghjkaberd Monastery stands on a mass of rock rising between the Akhurian and its right tributary, i.e. the Tzaghkots, at the southern extremity of Ani.

According to an inscription engraved on the southern wall of the church—now it is in a fallen state, but luckily, the inscription was read in due time—it was founded by Gregory the Enlightener, who, as legend has it, erected it after having pulled down the pagan temple to goddess Anahit standing in its site.

In the course of centuries, the church appeared in a state of utter decay so that between the 12th and 13th centuries, the princes Yerkaynabazuk had the present-day one erected in its site. It represents a central-domed rectangular structure with double-floor sacristies in its four corners. It has two entrances opening from its western and southern facades. Each of all the four facades of the church has two triangular niches.

After 1920 the facing stones of the monument were removed and carried away for the purpose of eventually destroying it—as a result of this, its southern and eastern facades were stripped of their stonework, remaining standing only thanks to their mortar base. The former has already tumbled down, while the latter is approaching the same state with every single passing day (the same perfidious action led to the collapse of the southern facade of Mren Church in 2005).

Exterior dimensions: 15.4 x 9.7 metres.

Церковь монастыря Ахчкаберда (Девичьей крепости) находится на южной окраине городища, на скалистом утесе, возвышающемся между рекой Ахурян и ее правым притоком речкой Ани.

Согласно некогда прочитанной надписи на ныне разрушенной южной стене, церковь основал Григор Лусаворич, который, по преданию, разрушил находящийся на этом месте храм богини Анаит.

Но по прошествии веков построенная им церковь тоже была разрушена, поэтому в XII-XIII веках князья Долгорукие построили на этом месте нынешнюю церковь, которая имеет вписанную в прямоугольный объем центрально-купольную композицию с двухъярусными приделами в четырех углах. Два входа открыты с западной и южной стороны. На всех четырех фасадах есть парные треугольные ниши.

После 1920-ого года с целью умышленного уничтожения церкви были разрушены и пропали облицовочные плиты фундамента церкви. Вследствие этого остались только остатки слоя известкового раствора южного (уже обрушился) и восточного фасадов. Последний каждодневно разделяет ту же судьбу (таким же вероломным способом в 2005 году был разрушен западный фасад Мренского собора).

Внешние размеры церкви – 15,4 x 9,7 м.

382
383

ԱՂՋԿԱԲԵՐԴԻ ՎԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ | MONASTIC CHURCH OF AGHJKABERD | ЦЕРКОВЬ МОНАСТЫРЯ АХЧКАБЕРДА


0 1 2 3 4 5 10 մ



ՇՈՒՇԱՆ ՊԱՀԼԱՎՈՒՆՈՒ ԵԿԵՂԵՑԻ

CHURCH OF SHUSHAN PAHLAVUNY

ЦЕРКОВЬ ШУШАН ПАХЛАВУНИ



Շուշան Պահլավունու եկեղեցին գտնվում է Միջնաբերդի հյուսիսային ստորոտին:

Դեռևս 1906 թ. իրականացված մասնակի պեղումների ժամանակ հայտնաբերվում է եկեղեցու մուտքի բարավորը՝ 1037 թ. հիմնավոր նորոգության ընդարձակ արձանագրությամբ, սակայն եկեղեցու մնացորդներն ամբողջապես հողի տակից լույս աշխարհ են հանվում միայն 1916 թ.:

Ունի գմբեթավոր դահլիճի հորինվածք: Միակ մուտքը բացված է եղել հարավային ճակատից: Խորանի երկու կողմերում ունեցել է մեկական ավանդատներ, որոնցից հյուսիսայինն իսպառ ավերված է:

The monument stands at the northern base of the Citadel.

The partial excavations conducted in 1906 uncovered its entrance tympanum with a long inscription commemorating its thorough renovation implemented in 1037. It was only in 1916 that all the remnants of the church were entirely unclosed.

It represents a domed hall with an entrance opening from its southern facade. It used to have a vestry on either side of the sanctuary, but the northern one is now totally destroyed.

Церковь Шушан Пахлавуни находится у северного подножия Цитадели.

Еще во время частичных раскопок 1906 года был обнаружен тимпан входа церкви с пространной надписью 1037 года, рассказывающей о ее основательном ремонте, но остатки церкви полностью были извлечены из-под земли только в 1916 году.

Церковь имеет композицию купольного зала. Единственный вход был открыт с северной стороны. Имела приделы по обеим сторонам алтарной апсиды. Северный придел полностью разрушен.

«ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ» ԵԿԵՂԵՑԻ | "UNIQUE" CHURCH | "УНИКАЛЬНАЯ" ЦЕРКОВЬ

Պատմական անունը մոռացության մատնված և ճարտարապետ Ն. Տոկարսկու կողմից «Յուրահատուկ» կոչված եկեղեցին գտնվում է Սբ. Առաքելոց եկեղեցուց փոքր-ինչ հարավ-արևելք:

Հայտնաբերվել է 1909 թ. Ն. Մառի գլխավորությամբ իրականացված պեղումների ժամանակ: Մասնագիտորեն քննել է Ն. Տոկարսկին 1911 թ.:

Ունի գմբեթավոր դահլիճի հորինվածք: Զույգ մուտքերը բացված են հարավային և արևմտյան ճակատներից: Բոլոր չորս ճակատներում Աղջկաբերդի եկեղեցու նման ունեցել է եռանկյուն զույգ խորշեր, ավանդատներ (հավանաբար կրկնահարկ)՝ միայն խորանի երկու կողմերում: Բոլորաձև թմբուկն առնված է եղել կոնաձև վեղարի ներքո:

Հարդարանքի աչքի ընկնող դրվագներից են խորանի կիսաբոլորակ որմին ձուլված որմնակամարաշարը, որմնախոյակները և պեղումների ժամանակ հայտնաբերված առանձին քանդակազարդ բեկորները:

Արտաքին չափերն են՝ 14,7 x 7,4 մ:

The monument the historical name of which has fallen into oblivion—it is conventionally named Unique Church by architect N. Tokarsky—is situated slightly southeast of Arakelots Church.

It was unearthed in 1909, during the excavations headed by N. Marr, and was studied by N. Tokarsky in 1911.

The church represents a domed hall with two entrances opening from its southern and western facades. Like the church of Aghjkaberd, it used to have a pair of triangular niches in each of its four facades, as well as sacristies—probably double-floor—only on both sides of the chancel. Its circular drum lay beneath a conical spire.

The decoration of the church is especially remarkable for the arcature forming an integral part of the semi-circular wall of the sanctuary, the built-in-wall capitals and certain sculptured fragments unclosed during the excavations.

Exterior dimensions: 14.7 x 7.4 metres.

Церковь, историческое название которой предано забвению и которую архитектор Н. Токарский назвал "Уникальной", находится немного юго-восточнее церкви Сурб Аракелоц (Св. Апостолов).

Была обнаружена во время раскопок 1909 года под руководством Н.Я. Марра. Церковь профессионально исследована Н. Токарским в 1911 году.

Имеет композицию купольного зала. Два входа открыты с южной и западной стороны. На всех четырех фасадах, схожих с церковью Девичьей крепости, имела парные треугольные ниши и приделы (вероятно двухъярусные) лишь с обеих сторон алтарной апсиды. Круглый барабан венчался коническим шатром.

Бросающимися в глаза фрагментами декора являются аркатура полукруглой стены апсиды, капители и найденные во время раскопок отдельные резные детали.

Внешние размеры – 14,7 x 7,4 м.









0 1 2 3 4 5м





407	408
409	410

411

412



ՍԲ. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑԻ | ST. HRIPSIME CHURCH | ЦЕРКОВЬ СВ. РИПСИМЭ

Սբ. Հռիփսիմե եկեղեցու մնացորդները գտնվում են Մայր տաճարի հարավարևելյան անկյունից նույն ուղղությամբ մի քանի մետր հեռավորության վրա. «Կաթողիկէին արեւելակողմը կերեւի Սրբոց Հռիփսիմեանց եկեղեցւոյն աւերակները...»:

Հայտնի է, որ եկեղեցին կառուցվել է Սարգիս կաթողիկոսի նախաձեռնությամբ, ուստի՝ 992-1019 թթ. միջակայքում. «Տէր Սարգիս ... շինեաց վկայարան Սրբոց Հռիփսիմեանց առընթեր կաթողիկէին Անւոյ և փոխեաց անդ զնշխարս նոցա՝ բերեալ մեծաւ հանդէսիւ, և կարգեաց զօրն տօն մեծ»: Հիմք ընդունելով պատմիչի վկայությունը՝ կարելի է նշել, որ Սբ. Հռիփսիմե եկեղեցին պետք է կառուցված լիներ 1010/1011-1019 թթ. ընթացքում, քանի որ նրա կառուցման ժամանակ Մայր տաճարն արդեն գոյություն ուներ:

Եկեղեցին, որ երբեմն նույնացվել է Կատրամիդե թագուհու դամբարանի հետ, արտաքուստ եղել է բազմանիստ կենտրոնագմբեթ, իսկ ներքուստ՝ քառախորան կառույց: 1887 թ. արդեն մեծ մասամբ ավերակ եկեղեցու մասին ականատեսը նշել է. «Մայր եկեղեցուց դէպի հարաւ արևելք գտնվում է կիսաքանդ մատուռ, որը կկոչեմ Կադրամիտէի հանգստարան: Սա բազմանկիւնանի ձևով է շինուած, նման միանգամայն Կարսի Աբաս թագաւորի գերեզմանին»:

Ներկայումս հողաթմբի վերածված եկեղեցատեղիում հազիվ նշմարվում է խորանի կիսաբոլորակ շարվածքից մի հատված:

The remnants of the monument are situated within several metres of the south-eastern corner of the Cathedral, in the same direction: “East of the Cathedral, the ruins of Srbots Hripsimiants Church are seen...”

It is known to have been built on Catholicos Sargis’s initiative between 992 and 1019: “His Holiness Sargis... erected a martyrium for the Hripsimian virgins close to the Cathedral of Ani and carried their relics there with a solemn ceremony, declaring that day a great festival.” Judging from the information reported by the historiographer, St. Hripsime Church probably dates back to the period between 1010/1011 and 1019, for the Cathedral of Ani already existed during its construction.

Outwardly, the church, which was sometimes identified with the sepulchre of Queen Katramide, used to represent a polygonal central-domed structure and had four apses inwardly. In 1887 a visitor wrote the following about the church, then already mostly lying in ruins: “South-east of the Mother Church stands a semi-ruined chapel which I call Kadramite’s mausoleum. It is built as a polygonal structure which is very similar to the tomb of King Abas of Kars.”

At present the site of the church represents but a mound of earth where hardly a part of the semi-circular stonework of the bema may be discerned.

Остатки церкви Сурб Рипсимэ (Св. Рипсимэ) находятся на расстоянии нескольких метров от юго-восточного угла Кафедрального собора, в том же направлении: “На восточной стороне катогике виднеются развалины церкви Св. Рипсимэ”.

Известно, что церковь была построена по инициативе католикоса Саркиса, следовательно, между 992-1019 годами: “Тер Саркис...построил около катогике Ани церковь Св. Рипсимэ, и торжественно перенес туда ее останки, и объявил днем великого праздника”. Принимая за основу свидетельство историка, можно отметить, что церковь Св. Рипсимэ могла быть построена в течение 1010/1011-1019 годов, так как во время ее строительства Кафедральный собор уже существовал.

Церковь, иногда отождествляемая с усыпальницей царицы Катрамидэ, снаружи была многогранной центрально-купольной, а внутри—четырехапсидной постройкой. Об уже в основном разрушенной к 1887 году церкви очевидец отметил: “К юго-востоку от Кафедрального собора находится полуразрушенная часовня, которую назову гробницей Катрамидэ. Она построена в виде многоугольника, схожего с гробницей царя Карса Абаса”.

Ныне на месте превращенной в земляную насыпь церкви еле заметен фрагмент полукруглой кладки апсиды.

ԵԿԵՂԵՑԻ, № 47 | CHURCH, № 47 | ЦЕРКОВЬ, № 47

Պատմական անունը մոռացության մատնված և ըստ Ն. Մառի համարակալման՝ պայմանականորեն № 47 անունը ստացած եկեղեցու մնացորդները գտնվում են Նոր քաղաքի հյուսիսարևելյան մասում:

Պատմական վկայություններ և առավել ևս տեղեկություններ կառուցման ժամանակի վերաբերյալ հայտնի չեն:

Թերևս ԺԱ-ԺԲ դարերի շինություն է:

Ունի կենտրոնագմբեթ հորինվածք: Խորանի երկու կողմերում մեկական ավանդատներ են, իսկ առնվազն արևելյան և հարավային ճակատներում՝ եռանկյուն զույգ խորշեր:

Պահպանվել է գրեթե գետնատարած մակարդակով (չհաշված ավագ խորանին հարող մասերում մինչև 1 մ բարձրությամբ կրաշաղախ զանգվածեղ մնացորդները):

Արտաքին չափերն են՝ 17,1 x 13,7 մ:

The remains of the church whose historical name is consigned to oblivion and which is named “№ 47” by N. Marr, are situated in the north-east of the New City.

There exist no historical records relating to this sanctuary; nor is there any information regarding the time of its construction—perhaps, it traces back to the period between the 11th and 12th centuries.

It represents a central-domed building with a vestry on either side of the chancel, and two triangular niches at least in its eastern and southern facades.

The church is almost totally levelled with the ground with the exception of some huge mortar remains which are preserved to a height of up to 1 m in the parts close to the main apse.

Exterior dimensions: 17.1 x 13.7 metres.

Остатки церкви, историческое название которой предано забвению и которая по нумерации Н. Я. Марра условно обозначена № 47, находятся в северо-восточной части Нового города.

Неизвестны исторические свидетельства и тем более сведения о времени постройки.

Возможно, это постройка XI-XII веков.

Имеет центрально-купольную композицию. Имеет приделы по обеим сторонам алтарной апсиды, а по меньшей мере на восточном и южном фасадах—парные треугольные ниши.

Сохранилась почти на уровне земли (не считая примыкающих к алтарю массивных остатков слоя известкового раствора высотой до 1 м).

Внешние размеры – 17,1 x 13,7 м.





420
421 422 425
423 424

ԵԿԵՂԵՑԻ, Ժ | CHURCH, № 10 | ЦЕРКОВЬ, № 10

Պատմական անունը մոռացության մատնված և ըստ Ն. Մառի համարակալման՝ պայմանականորեն № 10 անունը ստացած եկեղեցու մնացորդները գտնվում են Նոր քաղաքի հյուսիսային սահմանագլխին՝ քաղաքն այդ կողմից երիզող Իգաձորի պռնկին:

Թերևս Ժ-ԺԱ դարերի շինություն է:

Եղել է արևմտյան ճակատից բացված միակ մուտքով միանավ, առանց ավանդատների շինություն:

Ներկայումս եկեղեցուց պահպանվել է հյուսիսային որմի որմնասյանը հարող հատվածը (ի դեպ, տակավին Ի դարի սկզբներին եկեղեցու հյուսիսային որմն ամբողջությամբ կանգուն էր):

Արտաքին չափերն են՝ 9,3 x 5,5 մ:

The historical name of Church “№ 10,” as numbered by N. Marr, has sunk into oblivion. Its ruins are located on the verge of Igadzor, which extends in the north of the New City, on its northern boundary.

Probably, it may be attributed to the 10th to 11th centuries.

It used to represent a uni-nave building without sacristies, its only entrance opening from its western facade.

The present-day vestiges of the monument comprise the part adjoining the pilaster of its northern wall (as of the early 20th century, this wall was preserved thoroughly standing).

Exterior dimensions: 9.3 x 5.5 metres.

Остатки церкви, историческое название которой предано забвению и которая по нумерации Н.Я. Марра условно обозначена № 10, находятся на северной границе Нового города, на краю окаймляющего город с этой стороны ущелья Игадзор.

Возможно, это постройка X-XI веков.

Это была однонефная постройка без приделов и с единственным входом в западной стене.

В настоящее время от церкви сохранился фрагмент, примыкающий к полуколонне северной стены (кстати, еще в начале XX века северная стена церкви была целостной).

Внешние размеры – 9,3 x 5,5 м.


0 1 2 3 4 5մ

ՔԱՐԻՄԱԴԻՆԻ ԵԿԵՂԵՑԻ, ՃԱ

CHURCH OF KARIMADIN, № 101

ЦЕРКОВЬ КАРИМАДИНА, № 101

Պատմական անունը մոռացության մատնված և ըստ Ն. Մառի համարակալման՝ պայմանականորեն № 101 և 1912 թ. հայտնաբերված եկեղեցու զանգակատան շինարարական արձանագրության մեջ հիշատակված Քարիմադինի անվամբ հայտնի եկեղեցու մնացորդները գտնվում են Հին քաղաքի սահմաններում՝ Միջնաբերդից հյուսիս:

Թերևս Ժ-ԺԱ դարերի շինություն է: Կանգնած է եղել եռաստիճան որմնախարսխի վրա:

Ունի հարավային ճակատից բացված միակ մուտքով, խորանի երկու կողմերում մեկական ավանդատներով կենտրոնագմբեթ հորինվածք: Արտաքին հարդարանքը եղել է բավականաչափ շքեղ, մասնավորապես շուրջպար ձգվել է որմնակամարաշարը: Բացի այդ՝ եկեղեցին, բացառությամբ արևմտյան ճակատի, մնացած կողմերում ունեցել է երկուական եռանկյուն խորշեր:

Ուշագրավ առանձնահատկությունն է արևմտյան ճակատում որմի միջնահատվածի ելուստը, որը ներքուստ հարդարված է երեք փոքր խորաններով:

Ներկայումս եկեղեցու պահպանված որմերն ունեն առավելագույնը 1 մ բարձրություն:

Արտաքին չափերն են՝ 14,3 x 9,7 մ:

The church whose historical name is in oblivion was unearthed in 1912 together with its belfry. N. Marr named it “№ 101,” but it is also known by the name of Karimadin, which is mentioned in the construction inscription of the belfry. The remnants of the monument are within the territory of the Old City (*Hin Kaghak*), north of the Citadel.

The church, which may be ascribed to the 10th to 11th centuries, stands on a three-step socle.

It represents a central-domed building with a sacristy on either side of the chancel and an entrance opening from its southern facade. The monument was distinguished for the splendour of its outer decoration, and particularly, for its arcature stretching all around it. It used to have two triangular niches in each of its facades, with the exception of the western one.

The church is especially remarkable for the prominence of the middle part of the wall of its western facade, which is inwardly enriched with three small apses.

At present its walls are preserved to a maximum height of 1 m.

Exterior dimensions: 14.3 x 9.7 metres.

Остатки церкви, историческое название которой предано забвению и которая по нумерации Н. Я. Марра условно обозначена № 101 и упомянута под названием Каримадин в строительной надписи колокольни, найденной в 1912 году, находятся в пределах Старого города к северу от Цитадели.

Возможно, это постройка X-XI веков. Стояла на трехступенчатом цоколе.

Это центрально-купольное сооружение, имеющее приделы по обеим сторонам алтарной апсиды, единственный вход находится с южной стороны. Имела довольно роскошное внешнее убранство, в частности, декоративную аркатуру на четырех стенах. Кроме того, церковь имела парные треугольные ниши на всех фасадах, за исключением западного.

Примечательной особенностью церкви является выступ посередине стены западного фасада, который внутри оформлен тремя маленькими апсидами.

В настоящее время сохранившиеся стены церкви имеют максимальную высоту в 1 м.

Внешние размеры – 14,3 x 9,7 м.



433	
434	435
	436

ԵԿԵՂԵՑԻ, Թ | CHURCH, № 50 | ЦЕРКОВЬ, № 50

Պատմական անունը մոռացության մատնված և ըստ Ն. Մառի համարակալման՝ պայմանականորեն № 50 անունը ստացած եկեղեցու մնացորդները գտնվում են Նոր քաղաքի արևելյան կողմում:

Թերևս ԺԲ-ԺԳ դարերի շինություն է: Ունի միանավ բազիլիկի հորինվածք: Չունի ավանդատներ: Արևմտյան և հարավային որմերի հիմնավեր լինելու պատճառով դժվար է որոշել մուտքի ուղղությունը:

Ներկայումս եկեղեցուց հազիվ 1 մ բարձրությամբ պահպանվել է սոսկ խորանի հյուսիսարևելյան անկյանը հարող հատվածը:

Արտաքին չափերն են՝ 10,6 x 6,0 մ:

The remnants of Church “№ 50,” as numbered by N. Marr—its historical name has not come down to our days—are preserved in the east of the New City.

Presumably, it dates from the period between the 12th and 13th centuries. It represents a uni-nave basilica without sacristies. Its western and southern walls are totally destroyed, which makes it difficult to determine whence its entrance opened.

Nowadays only the part adjoining the north-eastern corner of the bema is preserved, its height hardly reaching 1 m.

Exterior dimensions: 10.6 x 6.0 metres.

Остатки церкви, историческое название которой предано забвению и которая по нумерации Н. Я. Марра условно обозначена № 50, находятся на восточной стороне Нового города.

Возможно, это постройка XII-XIII веков. Имеет композицию однонефной базилики. Не имеет приделов. Из-за разрушенных до основания западной и южной стен невозможно определить местонахождение входа.

В настоящее время сохранилась лишь часть церкви высотой всего в 1 м, примыкающая к углу северо-восточной апсиды.

Внешние размеры – 10,6 x 6,0 м.


0 1 2 3 4 5մ

ԽԱՉՈՒՏԻ (ԲԱԽՏԱՂԵԿԻ) ԵԿԵՂԵՑԻ

CHURCH OF KHACHUT (BAKHTAGHEK)

ЦЕРКОВЬ ХАЧУТА (БАХТАГЕКИ)

Խաչուտի (Բախտաղեկի) եկեղեցու մնացորդները գտնվում են Նոր քաղաքի հյուսիսային կողմում՝ Գագկաշենից հյուսիս-արևելք:

Թվագրվում է ԺԲ-ԺԳ դարերով: Հայտնաբերվել է 1892-1893 թթ. պեղումների ժամանակ:

Ունեցել է ուղղանկյուն գմբեթավոր հորինվածք: Միակ մուտքը բացված է եղել արևմտյան ճակատից: Խորանի երկու կողմերում ունեցել է, ամենայն հավանականությամբ, կրկնահարկ ավանդատներ:

Տասներկունիստանի որմնակամարազարդ թմբուկը պսակված է եղել հովհարաձև վեղարով:

Պեղումների ժամանակ հայտնաբերվել են ելնդագիր խոշոր տառերով բեմառաջի քարերը, ինչպես նաև Քրիստոսի, Աստվածամոր և Հովհաննես Մկրտչի («Դեհիսուս») բարձրաքանդակներով բարավորը: Պեղումներն ի հայտ են բերել նաև եկեղեցու ներքին հարդարանքի կարևոր դրվագ՝ որմնանկարները: Վերջիններս կրում էին հայերեն հիշատակագրություններ:

Հայտնաբերված ճարտարապետական բեկորները, արձանագրություններն ու որմնանկարները զգուշությամբ և խնամքով փոխադրվում են Անիում հիմնված թանգարան, սակայն 1918 և 1920 թթ. Անի ներխուժած թուրքական զորքերն ամեն բան տակնուվրա են անում: Երբեմնի թանգարանի մնացորդների մեջ 2010 թ. գտնվեց Խաչուտի եկեղեցու բարավորի բեկորը:

Ներկայումս եկեղեցատեղին հազիվ է նշմարվում:

Արտաքին չափերն են՝ 13,0 x 8,4 մ:

The remnants of the church are situated in the north-east of Gagkashen Church, in the north of the New City.

It is attributed to the period between the 12th and 13th centuries and was unclosed during the excavations of 1892 to 1893.

It used to represent a domed rectangular structure, with its only entrance opening from its western facade. It had vestries—most presumably, double-floor—on both sides of the bema. Its dodecahedral tambour was adorned with arcature and crowned with a fan-shaped spire.

The excavations unclosed the tympanum of the church with reliefs depicting Christ, St. Mary and John the Baptist (*Deisis*), as well as stones with large embossed letters carved on them (once they lay in front of the bema). They also unearthed an important part of the inner ornamentation of the monument—frescoes with Armenian inscriptions.

The unclosed architectural fragments, inscriptions and mural paintings were carefully taken to the museum that had been founded in Ani, but the Turkish troops who invaded the city in 1918 and 1920 turned everything upside down there. In 2010 a fragment of the tympanum was found amidst the vestiges of the former museum.

At present the church site can hardly be found.

Exterior dimensions: 13.0 x 8.4 metres.

Остатки церкви Хачута (Бахтагеки) находятся на северной стороне Нового города, северо-восточнее церкви Гагикашен.

Датируется XII-XIII веками. Обнаружена во время раскопок 1892-1893 годов.

Церковь имела прямоугольную купольную композицию. Единственный вход был открыт с западной стороны. С обеих сторон алтарной апсиды имела, по всей вероятности, двухъярусные приделы. 12-гранный, покрытый декоративной аркатурой барабан венчался зонтичным шатром.

Во время раскопок были обнаружены камни фасадной стенки алтарного возвышения с выпуклыми крупными буквами, а также тимпан с изображениями Христа, Богоматери и Иоанна Предтечи (“Деисус”). Раскопки выявили также важную деталь внутреннего убранства церкви—росписи. Последние имели надписи на армянском.

Обнаруженные архитектурные фрагменты, надписи и росписи осторожно и бережно были перевезены в основанный в Ани музей, но в 1918 и 1920 годах вторгнувшиеся в город турецкие войска перевернули все вверх дном. В остатках бывшего некогда музея в 2010 году был найден обломок тимпана церкви.

В настоящее время место церкви едва различается.

Внешние размеры – 13,0 x 8,4 м.


0 1 2 3 4 5m

448
449









450	453
451	
452	454

ՏԻԳՐԱՆ ՀՈՆԵՆՑԻ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ | ST. GRIGOR CHURCH OF TIGRAN HONENTS | ЦЕРКОВЬ СУРБ ГРИГОР ТИГРАНА ОНЕНЦА

Տիգրան Հոնենցի վանքի Սբ. Գրիգոր եկեղեցին գտնվում է Նոր քաղաքի հարավարևելյան եզրին՝ դեպի Ախուրյան գետը թեքված ձորալանջին:

Կառուցվել է 1215 թ.: Իր իսկ շինարարական արձանագրության մեջ վանք անվանված հուշարձանախումբը բաղկացած է կենտրոնագմբեթ հորինվածքով մեկ եկեղեցուց, վերջինիս հյուսիս-արևմտյան անկյանը կից միանավ մատուռից և արևմտյան ճակատին կից սրահանման գավթից:

Միակ մուտքը բացված է արևմտյան ճակատից: Բոլոր չորս ճակատներում առկա են զույգ եռանկյուն խորշեր: Խորանի երկու կողմերում ունի կրկնահարկ ավանդատներ:

Տասնվեցնիստանի որմնակամարազարդ թմբուկն առնված է կոնաձև վեղարի ներքո:

Եկեղեցին աչքի է ընկնում արտաքին հարուստ հարդարանքով՝ պատկերաքանդակներ, զարդաքանդակներ:

Ներքուստ սվաղված է և պատված Հայաստանում քրիստոնեության տարածման պատմական կարևոր հանգրվանները և աստվածաշնչյան թեմաները ներկայացնող հարուստ որմնանկարներով:

2009 թ. իրականացվել են եկեղեցու մասնակի վերականգնման աշխատանքներ:

Արտաքին չափերն են՝ 14,2 x 9,7 մ:

Tigran Honents is the name given to a cluster of monuments, named monastery in their construction inscription and consisting of St. Grigor Church, a uni-nave chapel adjoining its north-western corner and a narthex resembling a hall located close to the western facade of the same church.

St. Grigor stands on a gorge slope slanting towards the river Akhurian, at the south-eastern extremity of the New City. It dates back to 1215 and represents a central-domed church with its only entrance opening from its western facade. Each of its four facades has a pair of triangular recesses. There is a double-floor sacristy on either side of the sanctuary.

The dioctahedral drum of the church is adorned with an arcature and crowned with a conical spire.

The monument is distinguished for its rich outer ornamentation consisting of reliefs and various decorative patterns.

It is inwardly plastered and abounds in frescoes of Biblical themes and others depicting the most important historical episodes of the spread of Christianity in Armenia.

In 2009 St. Grigor Church underwent partial restoration.

Exterior dimensions: 14.2 x 9.7 metres.

Церковь Сурб Григор (Св. Григория) монастыря Тиграна Оненца находится на юго-восточном краю Нового города, на склоне ущелья реки Ахурян.

Была построена в 1215 году. Группа памятников, названная в строительной надписи монастырем, состоит из одной центрально-купольной церкви, с однонефной часовней в северо-западном углу последней и притвором-галереей рядом с западным фасадом.

